

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՖԱՆՏՈՄ ԳՐՈՒՊ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔԻ ԳԱԲՐՈՍԻԵՆԻՏՆԵՐԻ (ՄՈՆՑՈՆԻՏՆԵՐԻ)
ՀԱՆՔԱՎԱՅՐԻՑ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

Տնօրեն՝

Բ. Ավետիսյան

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ	3
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	5
Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը	5
Նախատեսվող գործունեության բնութագիրը	7
Նախագծման նորմատիվ-իրավական հենքը	8
2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	12
Գտնվելու վայրը	12
Ռեկիեֆ, երկրաձևաբանություն, սեյսմիկ բնութագիրը, սողանքներ	16
Շրջանի կլիման	23
Մթնոլորտային օդ	27
Ջրային ռեսուրսներ	27
Հողեր	29
Բուսական և կենդանական աշխարհ	32
Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ	34
3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ	39
Ենթակառուցվածքներ	39
Հողերի տնտեսական յուրացման բնութագիր	44
Պատմության, մշակութային հուշարձաններ	44
4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	46
5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	52
6. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍԱՆԻՏԱՐԻԱ	56
7. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ	58
8. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՂՏՈՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ Օգտագործված գրականության ցանկ	60 63

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Օգտակար հանածոյի պաշարներ՝ օգտակար հանածոյի կուտակումներ, որոնց ծավալը, քանակը, որակը և տարածքային դիրքն ու ձևը որոշված են

Հանքավայր՝ ընդերքի մաս, որը պարունակում է օգտակար հանածոյի պաշարներ (այդ թվում՝ կանխատեսումային), որոնք ստացել են երկրաբանատնտեսագիտական գնահատական.

Օգտակար հանածոյի արդյունահանում՝ օգտակար հանածոյի դուրսբերումը հանքավայրերից և դրանց մեջ պարփակված օգտակար բաղադրիչների կորզմանն ուղղված աշխատանքների համալիր

Նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում.

Նախագծային փաստաթուղթ՝ նախատեսվող գործունեության տեխնիկական զեկույց, տեխնիկատնտեսական հիմնավորում, տեխնիկատնտեսական հաշվարկ, ճարտարապետաշինարարական նախագիծ.

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության հիմնական փուլ՝ հիմնադրությային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության ուսումնասիրության և վերլուծության արդյունքում դրանց թույլատրելիության վերաբերյալ պետական փորձաքննական եզրակացություն տալու գործընթաց.

Բնապահպանական կառավարման պլան՝ ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի՝ որոշակի ժամանակի ընթացքում

Բույսերի կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող բույսերի և համակեցությունների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

Կենդանիների Կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ է, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացող կենդանական տեսակների կարգավիճակի, աշխարհագրական

տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների, ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին: Կենդանիների Կարմիր գիրքը վարվում է հազվագյուտ և անհետացող կենդանական տեսակների և համակեցությունների հաշվառման, պահպանության, վերարտադրության, օգտագործման և գիտականորեն հիմնավորված հատուկ միջոցառումների մշակման և իրագործման, ինչպես նաև դրանց մասին բնակչությանը իրազեկելու նպատակով

Հող՝ երկրի մակերևութային բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ

Հողի բերրի շերտ՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով

Ռեկուլտիվացում՝ խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական

Ազդակիր համայնք՝ շրջակա միջավայրի վրա հիմնադրությամբ փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք

Խախտված հողեր՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով մշտադիտարկումներ՝ ընդերքի երկրաբանական ուսումնասիրության և օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքային ծրագրերին զուգընթաց՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ծրագրով, օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքային նախագծով, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտով և ազդեցության գնահատման հաշվետվությամբ ամրագրված ցուցանիշների հիման վրա իրականացվող մշտադիտարկումներ:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

▪ **Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը**

ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի գաբրուսիենիտների հանքավայրում նախատեսվում է իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանում:

Հանքավայրի պաշարները հաստատվել են ՀՀ կառավարությանն առընթեր ՕՀՊՀ-ի 1995 թվականի դեկտեմբերի 22-ի լիազումար նիստի թիվ 10 արձանագրությամբ ըստ հետևյալ կարգերի և քանակությունների.

Աղյուսակ 1.

Պաշարների կարգը	Վայքի տեղամաս, հազ.մ ³	Աղավնաձորի տեղամաս, հազ.մ ³	Ընդամենը հանքավայրում, հազ.մ ³
A	304.6	34.0	338.6
B	673.8	210.5	884.3
C ₁	1630.0	783.5	2413.5
C ₂	9666.4	2523.5	12189.9
Ընդամենը	12274.8	3551.5	15826.3

01.01.2021թ.-ի դրությամբ հանքավայրի մնացորդային պաշարները կազմում են.

Աղյուսակ 2.

Պաշարների կարգը	Վայքի տեղամաս, հազ.մ ³	Աղավնաձորի տեղամաս, հազ.մ ³	Ընդամենը հանքավայրում, հազ.մ ³
A	300.592	33.8	334.392
B	673.8	210.5	884.3
C ₁	1630.0	783.5	2413.5
C ₂	9666.4	2523.5	12189.9
Ընդամենը	12270.792	3551.3	15822.092

Հանքավայրի օգտակար հանածոն պիտանի է ԳՈՍՏ 9479-98 պահանջներին համապատասխանող երեսապատման քարերի ստացման համար: Բլոկների արդյունահանման ջարդոնը և փուշտա շերտի առաջացումները թույլատրվել է օգտագործել որպես հումք շինարարական խճի և ավազի արտադրության համար (ըստ ՀՍՏ ԳՈՍՏ 8267-95 և 8236-95): Փորձնական արդյունահանման տվյալներով բլոկների նվազագույն ելքը գաբրուսիենիտների զանգվածից կազմում է 27.9%:

Փուշտա շերտի ապարների ծավալը ըստ A+B+C₁ կարգի կազմել են 345.7հազ.մ³, ըստ C₂ կարգի՝ 175.0հազ.մ³:

Ըստ ռադիացիոն-հիգիենիկ հատկությունների գաբրոսիենիտները և դրանցից ստացվող արտադրանքը բավարարում է HPБ-76 և ОСП-72/80 նորմատիվ փաստաթղթերի պահանջներին:

Վայքի հանքավայրի շրջանի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են պալեոգենի հրաբխածին-նստվածքային առաջացումները, չորրորդական անդեզիտաբազալտային կազմի լավաները, ինչպես նաև տարակազմ (միջին և թթու կազմի) ինտրուզիվ և մերձհրաբխային ապարները: Ինտրուզիվ ապարները կազմում են Թեքսար զանգվածի մերձգագաթային հատվածը: Հանքավայրի տարածքը հարում է Կայալուի ինտրուզիվ զանգվածի կենտրոնական հատվածին: Հայցվող տարածքի օգտակար հանածոն ներկայացված է մոխրագույնից մինչև սև գույնի գաբրոսիենիտներով, որոնք մերձմակերևութային հատվածում խիստ ճեղքավորված են և մասամբ վերածված խճավազի: Հանքավայրի գաբրոսիենիտները բնութագրվում են հետևյալ ֆիզիկամեխանիկական հատկություններով.

Աղյուսակ 3.

Հ/Հ	Ցուցանիշը	Չափման միավորը	Միջին մեծությունը
1.	Իրական խտությունը	գ/սմ ³	2.90
2.	Ծավալային զանգվածը	կգ/մ ³	2785
3.	Ծակոտկենությունը	%	3.96
4.	Ջրակլանումը	%	0.25
5.	Ամրության սահմանը սեղման ժամանակ	կգ/սմ ²	
	- չոր վիճակում		998
	- ջրահագեցած վիճակում		863
	- 50 փուլ սառեցումից-փափկեցումից հետո		767
6.	Փափկեցման գործակիցը		0.86
7.	Սառնակայությունության գործակիցը		0.89
8.	Զանգվածի կորուստը ծծմբական նատրիուլի լուծույթում 10 փուլ փորձարկումից հետո	%	3.16

Օգտակար հանածոյի միներալային կազմում մասնակցում են պլագիոկլազը, կալիումական դաշտային սպաթը, ամֆիբոլը, բիոտիտը, մագնետիտը և էպիդոտը: Գաբրոսիենիտներին բնորոշ է հիպիդիոմորֆ հատիկային, պորֆիրանման ստրուկտուրա:

▪ **Նախատեսվող գործունեության բնութագիրը**

«Ֆանտոմ Գրուպ» ՍՊ ընկերությունը Վայքի գաբրուսիենիտների հանքավայրի Վայքի և Աղավնաձոր տեղամասերի շահագործումը նախատեսում է իրականացնել բաց եղանակով:

Օգտակար հանածոյի արդյունահանումը նախատեսվում է կատարել առանց պայթեցման աշխատանքների՝ հորատասեպային եղանակով կամ էքսկավատորի վրա հարմարեցված հիդրավլիկ մուրճով: Նշված պայմաններով կառուցված բացահանքերն ունեն հետևյալ պարամետրերը՝

Աղավնաձոր տեղամաս

- առավելագույն երկարությունը – մոտ 300մ;
- առավելագույն լայնությունը – մոտ 175մ;
- առավելագույն մշակման խորությունը – մինչև 1400մ հորիզոնը;
- օտարման մակերեսը – մոտ 4հա;

Վայք տեղամաս

- առավելագույն երկարությունը – մոտ 480մ;
- առավելագույն լայնությունը – մոտ 460մ;
- առավելագույն մշակման խորությունը – մինչև 1400մ հորիզոնը;
- օտարման մակերեսը – մոտ 11.5հա:

Բացահանքերը շահագործվելու են զուգահեռաբար, 20 տարվա ընթացքում: Վայք տեղամասի Բացահանքի տարեկան արտադրողականությունը նախատեսվում է մոտ 613հազ.մ², Աղավնաձորի տեղամասում՝ մոտ 177հազ.մ³: Բացահանքում արդյունահանման աշխատանքները նախատեսվում է կատարել շուրջտարի, աշխատանքների օրերի թիվը տարում ընդունված է 260 օր, հերթափոխերի թիվը օրում -1, հերթափոխի տևողությունը - 8ժամ:

Օգտակար հաստաշերտի մշակման ժամանակ ընդունվում է ընդերկայնական, միակողմանի, խորացող մշակման համակարգ:

Բլոկների անջատումը լեռնային զանգվածից նախատեսվում է կատարել հորատասեպային եղանակով:

Ընդունված մշակման համակարգի տարրերն են՝ .

- աշխատանքային աստիճանի բարձրությունը –5մ
- աշխատանքային աստիճանի թեքությունը – 90°,
- մարված մակաբացման աստիճանի թեքությունը – 45°,
- աշխատանքային հրապարակի ամենափոքր լայնությունը – 20մ:

- մարված 2 աստիճանների մեջ թողնվում է 2մ լայնությամբ բերմա:

Բացահանքի պաշարների սպառումից հետո կկատարվեն խախտված տարածքների (բացահանք, արտադրական հրապարակ, ճանապարհներ) հարթեցման աշխատանքներ:

Նախքան շահագործական աշխատանքների սկիզբը 0.10-0.15մ հզորությամբ բաց շագանակագույն հողային զանգվածը հեռացվելու է, պահեստավորվելու է բացահանքի հարևանությամբ, հետագայում ռելիեֆի վերականգնման ժամանակ օգտագործելու նպատակով:

Աշխատանքների նկարագիրը և անհրաժեշտ ֆինանսական միջոցների գնահատականը կտրվի հանքավայրի շահագործման աշխատանքային նախագծի և ՇՄԱԳ հաշվետվության փաթեթում:

▪ ***Նախագծման նորմատիվ-իրավական հենքը***

Արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հիմնական հաշվետվությունը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են հետևյալ իրավական ակտերում.

- ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (ՀՕ-280, 28.11.2011թ.), որով սահմանվում են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:

- ՀՀ Հողային օրենսգիրք (ՀՕ-185, 02.05.2001թ.), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

- ՀՀ Ջրային օրենսգիրք (ՀՕ-373, 04.06.2002թ.), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

- «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.), որը սահմանում է պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:

- «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.), որը սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:

- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-121, 11.10.1994թ.), որի առարկան մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների կարգավորումն է:

- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-110, 21.06.2014թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները:

- ՀՀ բնապահպանության նախարարի 24.12.2012թ.-ի թիվ 365-Ն հրաման, որով կարգավորվում են շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին ընդերքօգտագործողների կողմից նախատեսված ռեկուլտիվացիոն աշխատանքների

նախահաշվային արժեքների հաշվարկման և ինդեքսավորման կարգի հետ կապված իրավահարաբերությունները:

- ՀՀ կառավարության 10.01.2013թ.-ի թիվ 22-Ն որոշում, որով սահմանվել են օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման, դրանց իրականացման վճարների չափերի հաշվարկման և վճարման կարգերը:

- ՀՀ կառավարության 14.12.2017թ.-ի թիվ 1463-Ն որոշում, որը կիրառվում է Հայաստանի Հանրապետության տարածքում խախտված հողերի հաշվառման, հողաշինարարական, քարտեզագրման, կանխատեսվող ու իրականացման ենթակա ռեկուլտիվացման աշխատանքների նախագծման, ռեկուլտիվացման, ռեկուլտիվացված հողերի նպատակային նշանակության ուղղությունների որոշման, ինչպես նաև նպատակային ու գործառական նշանակությանը համապատասխան՝ դրանց հետագա օգտագործման ժամանակ:

- ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի N781-Ն որոշում, որը սահմանում է սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:

- ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշում, որը սահմանում է ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը:

- ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի N1404-Ն որոշում, որով սահմանվել են հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և պակաս արդյունավետ հողերի բարելավման համար հողի բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները:

- ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը,

- ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը,

- ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը:
- ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի N676-Ն որոշում, որով հաստատվել են ընդերքօգտագործման թափոնների կառավարման և վերամշակման պլանների օրինակելի ձևերը:
- ՀՀ կառավարության 21.10.2021թ.-ի N1733-Ն որոշում, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված՝ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման հետ կապված հարաբերությունները:
- ՀՀ կառավարության 18.08.2021թ.-ի N1352-Ն որոշում, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ընդերքօգտագործողների կողմից Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածով սահմանված ռեկուլտիվացիոն աշխատանքների՝ նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգի հետ կապված իրավահարաբերությունները:

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

▪ *Գտնվելու վայրը*

Վայքի գաբրուսիենիտների հանքավայրը գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզում՝ Վայք քաղաքից 3.5կմ հյուսիս-արևելք, Զառիթափ գյուղից մոտ 7կմ հյուսիս և Արին գյուղից մոտ 3.5կմ հարավ-արևելք: Վարչական տեսակետից հայցվող տարածքը ներառված է Զառիթափ համայնքում (նկար 1, 2-1, 2-2): Մոտակա Երասխ ե/գ կայարանը գտնվում է հանքավայրից 75կմ հեռավորության վրա:

Հայցվող տարածքը բնութագրվում է հետևյալ կոորդինատներով (ըստ ArmWGS-84 համակարգի)¹.

1. 4396053.1562, 8543491.2104	21. 4396123.7581, 8543368.5277
2. 4396050.2139, 8543479.4299	22. 4396140.4961, 8543381.8847
3. 4396046.5849, 8543463.8210	23. 4396149.4396, 8543386.5203
4. 4396044.3292, 8543453.3167	24. 4396165.5700, 8543391.7955
5. 4396042.7599, 8543442.6161	25. 4396177.7080, 8543397.3906
6. 4396042.7599, 8543434.9589	26. 4396191.4428, 8543407.4614
7. 4396041.6920, 8543420.6804	27. 4396208.1087, 8543417.8513
8. 4396040.0190, 8543411.3227	28. 4396231.5466, 8543429.2286
9. 4396035.0000, 8543392.7057	29. 4396276.5897, 8543454.0422
10. 4396031.6540, 8543380.6886	30. 4396302.5479, 8543469.4773
11. 4396029.0489, 8543368.5796	31. 4396357.8574, 8543501.1127
12. 4396026.7779, 8543354.2485	32. 4396378.4877, 8543512.9861
13. 4396026.7779, 8543350.7896	33. 4396393.1870, 8543524.0853
14. 4396029.8389, 8543344.0689	34. 4396411.7251, 8543537.0429
15. 4396034.5784, 8543339.5223	35. 4396431.7434, 8543550.9774
16. 4396042.8608, 8543334.0264	36. 4396443.1242, 8543558.4023
17. 4396049.3224, 8543334.0264	37. 4396450.0226, 8543567.8289
18. 4396058.2694, 8543334.0264	38. 4396461.3207, 8543591.6692
19. 4396072.5845, 8543338.3049	39. 4396468.7512, 8543604.7097
20. 4396096.3347, 8543348.7390	40. 4396479.5840, 8543628.2056

¹ Հիմքը՝ Կադաստրի պետական կոմիտեի 1:10000 մասշտաբի J-8-38-V-v-3 տոպոգրաֆիական թերթ

41. 4396494.9294, 8543653.8598	71. 4396467.9764, 8543953.7472
42. 4396506.6834, 8543672.6507	72. 4396464.0943, 8543945.0302
43. 4396523.1957, 8543696.3383	73. 4396460.5267, 8543935.1581
44. 4396536.1562, 8543713.5439	74. 4396455.6576, 8543928.3371
45. 4396541.5965, 8543721.8662	75. 4396450.2723, 8543926.1470
46. 4396535.4377, 8543724.2294	76. 4396440.6803, 8543926.1470
47. 4396525.8912, 8543728.7500	77. 4396422.8419, 8543928.5052
48. 4396518.7059, 8543734.6065	78. 4396409.7158, 8543928.1686
49. 4396513.9840, 8543740.5657	79. 4396322.5660, 8543918.6145
50. 4396511.1097, 8543745.4973	80. 4396280.8239, 8543914.9050
51. 4396511.1097, 8543751.7648	81. 4396264.2762, 8543914.3619
52. 4396516.4465, 8543766.1455	82. 4396235.7926, 8543912.7328
53. 4396517.9956, 8543779.9712	83. 4396200.1651, 8543910.5637
54. 4396517.9956, 8543789.7263	84. 4396181.1118, 8543909.7464
55. 4396516.7047, 8543799.2877	85. 4396167.0722, 8543908.4201
56. 4396516.1815, 8543819.1729	86. 4396160.7756, 8543906.9452
57. 4396516.1815, 8543828.9775	87. 4396150.5715, 8543904.0924
58. 4396511.6052, 8543851.1550	88. 4396144.2329, 8543899.0380
59. 4396509.1149, 8543872.7587	89. 4396136.6050, 8543892.9088
60. 4396506.1264, 8543897.6859	90. 4396129.4068, 8543889.3600
61. 4396499.9218, 8543916.7591	91. 4396124.3575, 8543888.3925
62. 4396496.3665, 8543928.6915	92. 4396114.6883, 8543889.2527
63. 4396494.4842, 8543937.5886	93. 4396106.0849, 8543892.4297
64. 4396491.4516, 8543944.9155	94. 4396099.6060, 8543895.9963
65. 4396488.3321, 8543951.5417	95. 4396094.0990, 8543898.1580
66. 4396485.7089, 8543953.9571	96. 4396087.8361, 8543899.3468
67. 4396482.2464, 8543956.5825	97. 4396082.0053, 8543900.1036
68. 4396479.4133, 8543958.2632	98. 4396076.9302, 8543898.2661
69. 4396475.4262, 8543958.3681	99. 4396072.9365, 8543894.7200
70. 4396471.9636, 8543958.2632	100. 4396071.0435, 8543892.0512

101. 4396068.0899, 8543888.0055	110. 4396072.4608, 8543598.9659
102. 4396066.3367, 8543882.1412	111. 4396071.2278, 8543591.7377
103. 4396066.1228, 8543875.5495	112. 4396070.3472, 8543581.8653
104. 4396066.4651, 8543869.4714	113. 4396068.5860, 8543565.2938
105. 4396070.0951, 8543811.7154	114. 4396065.7678, 8543551.0142
106. 4396072.7147, 8543760.8452	115. 4396062.4214, 8543530.2114
107. 4396080.6643, 8543622.4749	116. 4396057.8420, 8543510.6431
108. 4396081.0912, 8543616.5951	117. 4396053.1562, 8543491.2104
109. 4396075.1028, 8543605.4886	1. 4396053.1562, 8543491.2104

Աղավնաձոր տեղամասը բնութագրվում է հետևյալ կոորդինատներով.

1. 4396081.0912, 8543616.5951	22. 4396026.7779, 8543354.2485
2. 4396075.1028, 8543605.4886	23. 4396026.7779, 8543350.7896
3. 4396072.4608, 8543598.9659	24. 4396029.8389, 8543344.0689
4. 4396071.2278, 8543591.7377	25. 4396034.5784, 8543339.5223
5. 4396070.3472, 8543581.8653	26. 4396042.8608, 8543334.0264
6. 4396068.5860, 8543565.2938	27. 4396049.3224, 8543334.0264
7. 4396065.7678, 8543551.0142	28. 4396058.2694, 8543334.0264
8. 4396062.4214, 8543530.2114	29. 4396072.5845, 8543338.3049
9. 4396057.8420, 8543510.6431	30. 4396096.3347, 8543348.7390
10. 4396053.1562, 8543491.2104	31. 4396123.7581, 8543368.5277
11. 4396053.1562, 8543491.2104	32. 4396140.4961, 8543381.8847
12. 4396050.2139, 8543479.4299	33. 4396149.4396, 8543386.5203
13. 4396046.5849, 8543463.8210	34. 4396165.5700, 8543391.7955
14. 4396044.3292, 8543453.3167	35. 4396177.7080, 8543397.3906
15. 4396042.7599, 8543442.6161	36. 4396191.4428, 8543407.4614
16. 4396042.7599, 8543434.9589	37. 4396208.1087, 8543417.8513
17. 4396041.6920, 8543420.6804	38. 4396231.5466, 8543429.2286
18. 4396040.0190, 8543411.3227	39. 4396232.8391, 8543621.3517
19. 4396035.0000, 8543392.7057	40. 4396185.3030, 8543638.2842
20. 4396031.6540, 8543380.6886	41. 4396138.5747, 8543643.2312
21. 4396029.0489, 8543368.5796	42. 4396081.0912, 8543616.5951

Վայք տեղամասը բնութագրվում է հետևյալ կոորդինատներով.


1. 4396494.9294, 8543653.8598	30. 4396467.9764, 8543953.7472
2. 4396506.6834, 8543672.6507	31. 4396464.0943, 8543945.0302
3. 4396523.1957, 8543696.3383	32. 4396460.5267, 8543935.1581
4. 4396536.1562, 8543713.5439	33. 4396455.6576, 8543928.3371
5. 4396541.5965, 8543721.8662	34. 4396450.2723, 8543926.1470
6. 4396535.4377, 8543724.2294	35. 4396440.6803, 8543926.1470
7. 4396525.8912, 8543728.7500	36. 4396422.8419, 8543928.5052
8. 4396518.7059, 8543734.6065	37. 4396409.7158, 8543928.1686
9. 4396513.9840, 8543740.5657	38. 4396322.5660, 8543918.6145
10. 4396511.1097, 8543745.4973	39. 4396280.8239, 8543914.9050
11. 4396511.1097, 8543751.7648	40. 4396264.2762, 8543914.3619
12. 4396516.4465, 8543766.1455	41. 4396235.7926, 8543912.7328
13. 4396517.9956, 8543779.9712	42. 4396200.1651, 8543910.5637
14. 4396517.9956, 8543789.7263	43. 4396181.1118, 8543909.7464
15. 4396516.7047, 8543799.2877	44. 4396167.0722, 8543908.4201
16. 4396516.1815, 8543819.1729	45. 4396160.7756, 8543906.9452
17. 4396516.1815, 8543828.9775	46. 4396150.5715, 8543904.0924
18. 4396511.6052, 8543851.1550	47. 4396144.2329, 8543899.0380
19. 4396509.1149, 8543872.7587	48. 4396136.6050, 8543892.9088
20. 4396506.1264, 8543897.6859	49. 4396129.4068, 8543889.3600
21. 4396499.9218, 8543916.7591	50. 4396124.3575, 8543888.3925
22. 4396496.3665, 8543928.6915	51. 4396114.6883, 8543889.2527
23. 4396494.4842, 8543937.5886	52. 4396106.0849, 8543892.4297
24. 4396491.4516, 8543944.9155	53. 4396099.6060, 8543895.9963
25. 4396488.3321, 8543951.5417	54. 4396094.0990, 8543898.1580
26. 4396485.7089, 8543953.9571	55. 4396087.8361, 8543899.3468
27. 4396482.2464, 8543956.5825	56. 4396082.0053, 8543900.1036
28. 4396479.4133, 8543958.2632	57. 4396076.9302, 8543898.2661
29. 4396475.4262, 8543958.3681	58. 4396072.9365, 8543894.7200

59. 4396071.0435, 8543892.0512	73. 4396236.9918, 8543630.4915
60. 4396068.0899, 8543888.0055	74. 4396241.9741, 8543625.9139
61. 4396066.3367, 8543882.1412	75. 4396287.9687, 8543631.9109
62. 4396066.1228, 8543875.5495	76. 4396296.1875, 8543635.8974
63. 4396066.4651, 8543869.4714	77. 4396303.7078, 8543637.7684
64. 4396066.0654, 8543909.8165	78. 4396313.7798, 8543630.4967
65. 4396100.1653, 8543866.7235	79. 4396321.9980, 8543628.5687
66. 4396204.675, 8543831.99.22	80. 4396328.4254, 8543631.3128
67. 4396211.8962, 8543819.9529	81. 4396343.0648, 8543647.8433
68. 4396200.4708, 8543753.4900	82. 4396353.3094, 8543649.9667
69. 4396200.4708, 8543732.6552	83. 4396376.0740, 8543640.8514
70. 4396213.5088, 8543705.6086	84. 4396385.3634, 8543640.0607
71. 4396232.7259, 8543662.6257	85. 4396423.5428, 8543629.9075
72. 4396236.9918, 8543637.9835	86. 4396433.3279, 8543629.9075

▪ ***Ռելիեֆ, երկրաձևաբանություն, ստղանքներ, սելյամիկ բնութագիր***

Վայքի գաբրոսիենիտների հանքավայրի գտնվում է Արփա գետի միջին հոսանքում: Տարածքը հարավից շրջապատված է Վայոց Ձորի լեռնաշղթաների ճյուղավորությունների խիստ կտրտված և թեք լանջերով: Վայոց ձորի լեռնաշղթան Զանգեզուրի լեռնաշղթայի արևմտյան լեռնաճյուղն է: Տ-աձև ձգվում է զուգահեռականին մոտ ուղղությամբ: Ունի ծալքաբեկորավոր կառուցվածք: Կազմված է կրաքարերից, կրաքարային մերգելներից, ավազաքարերից, կոնգլոմերատներից, հյուսիս-արևելքում՝ անդեզիտներից, դաջիտ-լիպարիտներից: Երկարությունը 64 կմ է, առավելագույն բարձրությունը՝ 3120 մ (Գոգի լեռ): Արևմտյան մասը աստիճանաբար ցածրանում, ճյուղավորվում և ձուլվում է Նախիջևանի հարթավայրին: Կան մինչև 150 մ բարձրության էքստրուզիվ, կոնաձև գմբեթներ: Հյուսիսային լանջը էրոզիոնդենուդացիոն աստիճաններով ցածրանում է դեպի Արփայի հովիտը: Կան քարայրեր: Հարավային և հարավարևմտյան լանջերը ավելի մասնատված են, ցածրանում են դեպի Միջինարաքսյան իջվածքը: Լանջերի ստորին մասերում զարգացած է բեդլենդը:

ՎԱՅՔԻ ԳԱՐՈՍԻԵՆԻՏԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐ
Միենատիկ իրադրային հատակագիծ




Կազմված է 1:50000 մասշտաբի J-38-7-Դ, J-38-8-В տոպոգրաֆիական քերթերի հիման վրա




Կապույտով նշված է CK-42 կոորդինատային ցանցը

Նկար 1.



Նկար 2-1.




Նկար 2-2.

Արփա և Նախիջևան գետերի վտակները լեռնաշղթայի լանջերին առաջացրել են ջրհավաք ձագարներ և էրոզիոն գոգավորություններ, որոնց մեջ աչքի է ընկնում հարավային լանջին զարգացած Զահուկի կրկեսաձև գոգավորությունը: Արևելյան մասում կան սառցապատման հետքեր (կառեր, մորեններ):

Բարձրալեռնային գոտում արտահայտված է սառնամանիքային հողմահարումը, 2200-2250 մ վրա շատ են քարացրոնները: Կան ժայռային մնացուկներ, քարափներ ու դարափուլեր: Լանջերը ծածկված են տափաստաններով, տեղ-տեղ՝ տրագանտային թփուտներով, գազաթային մասը՝ ենթալպյան և ալպյան մարգագետիններով:


Հանքավայրի տարածքը լեռնագրական տեսակետից տարածքը բնորոշվում է տարբեր ռելիեֆի ձևերով, որոնցից տիրապետող են լեռնահովտայինը:

Շրջանի ծալքաբեկորային լեռների ձևաբանական և մակերևույթի թեքության անկյունների սխեմատիկ քարտեզները բերվում են ստորև նկար 3-ում և 4-ում:




Նկար 3.

Թիվ 007-1480 և 007-1490 սողանքային մարմինները ըստ վտանգավորության գնահատվել է III-րդ դասի, ըստ ռիսկայնության՝ ցածր: Թիվ 007-1500 սողանքային մարմինը դասվել է վտանգավորության III-րդ դասին և համարվել է միջին ռիսկային:



Նկար 5.

Ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N 102-Ն հրամանի՝ Վայքի գաբրուսիենիտների հանքավայրի տարածքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, որին բնորոշ է 300սմ/վրկ² գրունտի հորիզոնական արագացման մեծություն (նկար 6):



Նկար 6.

▪ **Շրջանի կլիման**

Շրջանի կլիման խիստ ցամաքային է՝ ջերմաստիճանի օրեկան և տարեկան խիստ տատանումներով: Բնորոշ է շոգ, չոր ամառը, տաք, երկարատև աշունը և մեղմ, փոքր ձյան շերտով ձմեռը: Շրջանի կլիմայական գոտիների տարածման սխեմատիկ քարտեզը ներկայացված ստորև, նկար 7-ում:

Մթնոլորտային տեղումների տարեկան քանակը կազմում է 450մմ:

Ամենատաք ամիսը օգոստոսն է, միջին բազմամյա ջերմությամբ՝ $+24,4^{\circ}\text{C}$: Ամենացուրտ ամիսը հունվարն է, միջին բազմամյա ջերմությունը՝ $-3,2^{\circ}\text{C}$: Միջին նվազագույն բազմամյա ջերմությունը՝ -20°C : Առավելագույն բազմամյա ջերմությունը՝

+39°C: Ձմռան ամիսներին գերակշռում են հյուսիսային, արևելյան և արևմտյան քամիները: Քամու արագությունը տատանվում է 0.7-2.2մ/վրկ:

Ամառային ամիսներին գերակշռում են հյուսիսային, հարավ-արևելյան և հյուսիս-արևմտյան ուղղությամբ փչող քամիները, որոնց արագությունը տատանվում է 0.7-ից 1.1մ/վրկ սահմաններում: Ուժեղ քամիներ լինում են ամռանը, հատկապես հուլիս ամսին:


Արևափայլի տևողությունը 2409 ժամ է, առավելագույնը դիտվում է հունիս-հուլիս ամիսներին (277-318 ժամ), նվազագույնը՝ հունվարին (134 ժամ): Միջին տարեկան ջերմաստիճանը 4.10 (ավելի բարձր, քան հանրապետության մյուս բարձրլեռնային շրջաններում): Մեծ են մթնոլորտային տեղումները՝ տարեկան 802մմ, առավելագույնը (554մմ) տաք ամիսներին: Ձմեռը երկարատև է, առատ ձյան շերտով, արևոտ:

Աղյուսակներ 5-11-ում ներկայացված են հանքավայրի տարածքի (ըստ Վայք օդերևութաբանական կայանի) կլիմայական բնութագրերը:

Աղյուսակ 5.

Արևափայլի տևողություն

Ըստ ամիսների												Տարեկան գումարային
Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
134	135	154	158	220	290	330	306	269	218	169	132	2515



Նկար 7.

Աղյուսակ 6.

Օդի ամսական և տարեկան ջերմաստիճանները

Ըստ ամիսների											
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
-4.0	-2.2	3.5	10.3	15.0	19.7	23.5	23.4	19.0	12.0	5.6	-0.9

Աղյուսակ 7.

Օդի հարաբերական խոնավությունը,
%

Ըստ ամիսների												Միջին տարեկան	Միջին ամսական ժամը 15-ին	
Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		ամենացուրտ ամսվա	ամենաշոգ ամսվա
77	74	66	63	61	59	52	55	54	64	72	78	65	62	36

Մթնոլորտային տեղումները և ձնածածկը

Տեղումների քանակը, մմ միջին ամսական/առավելագույն տարեկան													Ձնածածկույթ		
Ըստ ամիսների												Տարեկան	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ
Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր				
28	28	36	57	63	45	23	21	15	36	31	31	41 1	65	51	-
22	20	23	36	30	32	34	39	23	29	37	27	39			

Անարև օրերի քանակը

Ըստ ամիսների												Տարեկան գումարային
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
7	6	5	3	1	0.2	0	0.2	0.4	2	4	6	36

Քամիներ

Ամիսներ	Կրկնելիությունը, % Միջին արագությունը, մ/վ								
	Ուղղությունները								
	Հս	Հս-Արլ	Արլ	Հվ-Արլ	Հվ	Հվ-Արմ	Արմ	Հս-Արմ	Անդորր
հունվար	1.8	4	13	11	6	21	10	17.	82
	1.5	0.6	1.7	2.6	1.7	2.5	2.1	1.4	-
հուլիս	19	10	18	20	6	9	9.9	9	45
	5.2	4.9	3.4	3.8	3.1	3.0	3.0	5.3	-

Քամիներ

Երեք ամիսների քամու միջին արագությունը		
Ամենացուրտ ամսին	Ամենատաք ամսին	Հունվարի միջին արագությունը
0.7	1.9	0.7

Քամու տարեկան միջին արագությունը կազմում է 0.9 մ/վրկ, նվազագույնը նկատվում է դեկտեմբերին՝ 0.5 մ/վրկ, առավելագույնը մարտին՝ 1.2 մ/վրկ: Քամու առավելագույն արագությունը 18 մ/վրկ է, որը նկատվել է մարտ ամսին, իսկ պոռթկումներով առավելագույն արագությունը կազմում է 22 մ/վրկ, որը նկատվում է նույն ամսին: Օրվա մեջ քամու արագությունը ուժեղ է լինում ժամը 15-ից ժամը 00-ն, երբ քամու առավելագույն արագությունը ժամը 21-ին է, հուլիս-օգոստոս ամիսներին հասնում է 1.7 մ/վրկ, իսկ մարտ-հուլիս ամիսներին ժամը 15-18-ը կազմում է 1.6 մ/վրկ:

▪ *Մթնոլորտային օդ*

Հայցվող տարածքը գտնվում է Արին և Վայք բնակավայրերի բնակելի հատվածներից 2.5-3.3կմ հեռավորության վրա: Այստեղ չկան գործող արդյունաբերական ձեռնարկություններ, բանուկ ավտոճանապարհներ: Աշխատանքների ընթացքում մթնոլորտային օդի վրա ազդեցությունը կապված է լինելու արտանետումների հետ:

Ընդերքօգտագործման նպատակով հայցվող տարածքում և հարակից Վայք ու Արին բնակավայրերի տարածքներում փոշու պարունակությունը որոշելու նպատակով իրականացվել են նմուշառումներ ասպիրացիոն եղանակով և փոշու պարունակության որոշում կշռային մեթոդով: Ընդհանուր առմամբ կատարվել է 3 չափում: Ըստ իրականացված չափումների փոշու պարունակությունը օդային ավազանում տատանվում է 0.06 – 0.10մգ/մ³ սահմաններում, ծծմբի երկօքսիդ՝ 0.014մգ/մ³, ազոտի երկօքսիդ՝ 0.0052մգ/մ³ և ածխածնի օքսիդ՝ 0.18մգ/մ³:

Հանքավայրում արդյունահանման աշխատանքների բնապահպանական միջոցառումների կառավարման պլանը կազմելիս որպես սահմանանիշ ընդունվելու է ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն հրամանի հավելված 1-ով ամրագրված նորմատիվները:

Ըստ նշված փաստաթղթի բնակավայրերում անօրգանական փոշու (SiO₂ պարունակությունը 70% և ավելի) առավելագույն միանվագ ՄԹԿ կազմում է 0.15մգ/մ³, միջին օրեկան ՄԹԿ՝ 0.05մգ/մ³:

▪ *Ջրային ռեսուրսներ*

Շրջանի կարևորագույն ջրագրական միավորը Արփա գետն է, որը սկիզբ է առնում Արցախի բարձրավանդակի հյուսիս-արևմուտքից և թափվում է Արաքս գետը՝

Նախիջևանի և Թուրքիայի սահմանի վրա: Հայցվող տարածքից Արփա գետի հունը գտնվում է 1.07կմ հեռավորության վրա: Գետի երկարությունը 126կմ է (Հայաստանում՝ 90կմ), ավազանը՝ 2630ք.կմ: Գետը սկսվում է 3200մ բարձրությունից: Վերին հոսանքում լեռնային է, հոսում է կիրճերով, ունի մեծ անկում: Ջերմուկի մոտ ընդունում է աղբյուրներից առաջացած ջրվեժը: Միջին հոսանքի որոշ հատվածներում Արփայի հովիտը լայն է, դարավանդավոր, ստորին հոսանքում դուրս է գալիս մերձարաքսյան հարթավայր:

Գլխավոր վտակներն են. աջից՝ Ջերմուկը, Հերիերը, Եղեգիսը, Ելփինը, ձախից՝ Ուղեձորը, Կապույտը, Գնիշիկը: Սնումը հիմնականում ձնաանձրևային է (57%), հորդանում է ապրիլ-հունիսին, առավել չափով՝ մայիսին: Տարեկան միջին ծախսը՝ 21,6խ.մ/վ է, առավելագույնը՝ 146խ.մ/վ, նվազագույնը՝ 6,2խ.մ/վ: Տարեկան հոսքը՝ 682մլն.խ.մ: Ստորև բերվում են գետի բազմամյա միջին տարեկան հոսքի բնութագրերը, միջին տարեկան առավելագույն և նվազագույն ծախսերը:

Աղյուսակ 12.

Գետի բազմամյա միջին տարեկան հոսքի բնութագրիչներ

Գետը	Ծախսը, մ ³ /վ	Տարեկան հոսքը, մլն.մ ³	Հոսքի մոդուլը, լ/վ կմ ²	Հոսքի շերտի բարձրությունը, մմ	Հոսքի գործակիցը
Արփա	21.5	679	10.05	331	0.48

Աղյուսակ 13.

Գետի միջին տարեկան, առավելագույն և նվազագույն ծախսերը

Գետը	Միջին տարեկան ծախսը, մ ³ /վ	Առավելագույն ծախսը, մ ³ /վ	Նվազագույն ծախսը, մ ³ /վ
Արփա	21.5	340	9.14

Հայցվող տարածքից մոտ 970մ հեռավորության վրա հոսում է Հերիեր գետը, Արփայի վտակներից մեկը: Գետը սկիզբ է առնում Թեքսարի լեռնաշղթայի հյուսիս-արևելյան լանջերից՝ 3040մ բարձրությունից: Երկարությունը 28 կմ է, ջրհավաք ավազանը 174 կմ²: Վերին հոսանքում առաջացնում է V-աձև հովիտ, 150-200մ խորությամբ ձոր և մի ջրվեժ 17մ բարձրության: Սնումը խառն է, վարարումը՝ մայիսին: Տարեկան միջին ծախսը՝ 1.89 խոր.մ/վրկ, հոսքը՝ 6 միլիոն խոր.մ:

Ըստ 2021 թվականի 3-րդ եռամսյակում կատարված դիտարկումների՝ Արփա գետի ջրի որակը Ջերմուկ քաղաքից վերև օգոստոսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), սեպտեմբերին՝ «լավ» (2-րդ դաս): Վայք քաղաքից վերև հատվածում օգոստոս և

սեպտեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Վայք քաղաքից ներքև հատվածում օգոստոս և սեպտեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս): Եղեգնաձոր քաղաքից վերև հատվածում օգոստոսին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս): Արենի գյուղից ներքև հատվածում օգոստոս և սեպտեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Վայքի գաբրո-սիենիտների հանքավայրի շրջանում գրունտային ջրերը սակավ են և ունեն սահմանափակ տարածում, որը բացատրվում է տարածքում առկա հրաբխանստվածքային ապարների տարածվածությամբ և նրանց խիստ ճեղքավորվածությամբ: Հունային և ենթահունային գրունտային ջրեր դիտարկվել են միայն Արփա գետի հովտում տարածված է գրունտային ջրերը, որոնք մի շարք հորատանցքերով հատվել են և հաստատվել են 1.0-8.0 մետր խորությունների վրա: Ինչպես նշվեց, այդ տարածքները սահմանափակ են և զբաղեցնում են Արփա գետի վեր հունային դարավանդը, իսկ II դարավանդում և ավելի վեր գրունտային ջրերը շատ խորն են: Գրունտային ջրերը պատկանում են հիդրոկարբոնատա-սուլֆատային տիպին: Կոշտությունը 5.8-6.7 մգ/էկվ արժեքի են: Ըստ միներալիզացիայի ջրերը թույլ աղային և, ըստ՝ ռեակցիայի թույլ թթվային են:

Երկրաբանական ուսումնասիրության ժամանակ անցած բոլոր հետախուզական փորվածքները անջուր են, տարածքում չեն արձանագրվել ջրահոսքեր կամ աղբյուրներ: Մթնոլորտային տեղումները ինքնահոս կերպով հեռանում են հանքավայրի տարածքից հաստվածքում առկա բնական ճեղքերի համակարգով:


▪ *Հողեր*

Հանքավայրի շրջանում տարածված են դարչնագույն անտառային կարբոնատային, շագանակագույն, բաց շագանակագույն հողերն ու սևահողերը (նկար 8):

Նախալեռնային գոտում շագանակագույն, մեծ մասամբ քարքարոտ, էրոզացված հողերն են, որոնք տարածվում են մինչև 1800մ բարձրությունները: Ավելի բարձր՝ մինչև 2400մ, սևահողերն են: Հողերի բնական տիպերի բաշխվածությունը ներկայացված է նկար 8-ում:

Շագանակագույն հողերն ձևավորվել են տիպիկ չոր տափաստանային բուսականության տակ, հրաբխային ապարների հողմահարված նյութերի, ինչպես նաև տեղակուտակ, ողողաբերուկ և հեղեղաբերուկ գոյացումների վրա:

Հողերի բնական տիպերի տրաման սխեմատիկ քարտեզ



- ① Դարչնագույն անտառային կարբոնատային տափաստանացված փոքր հզորության կավավազային ուժեղ - միջին հողմահարված
- ② Սևահողեր լվացված թույլ հումուսային փոքր հզորության կավավազային թույլ հողմահարված
- ③ Սևահողեր արևակարբոնատային թույլ հումուսային փոքր հզորության կավավազային թույլ հողմահարված
- ④ Սևահողեր սովորական թույլ հումուսացված միջին հզորության կավավազային կավավազային թույլ հողմահարված մշակովի
- ⑤ Մուգ-շագանակագույն քարքարոտ փոքր հզորության կավավազային միջին-ուժեղ հողմահարված
- ⑥ Մուգ-շագանակագույն հզոր կավային թույլ հողմահարված մշակովի
- ⑦ Շագանակագույն քարքարոտ միջին հզորության կավավազային թույլ հողմահարված
- ⑧ Շագանակագույն թույլ կարբոնատային հզոր կավավազային մշակովի
- ⑨ Շագանակագույն թույլ ղեֆերենցված փոքր հզորության կավավազային միջին-ուժեղ հողմահարված
- ⑩ Բաց-շագանակագույն քարքարոտ փոքր հզորության կավավազային թույլ հողմահարված մշակովի
- ⑪ Բաց-շագանակագույն քարքարոտ փոքր հզորության կավավազային միջին հողմահարված մշակովի
- ⑫ Արմատական ապարների ելքեր

Նկար 8.

Այս տիպի հողերը բնութագրվում են հետևյալ քիմիական և ջրաֆիզիկական հատկություններով:

Աղյուսակ 14.

Հողատիպը և ենթատիպը	Խորությունը, սմ	Տոկոսներով			Կլանված կատիոնների գումարը, մ/էկվ 100գ հողում	pH-ը ջրային քաշվածքում
		հումուս	CO ₂	գիպս SO ₄		
Մուգ-շագանակագույն	0-15	3.2	1.4	0.0	33.1	7.9
	15-34	2.1	7.3	0.0	31.5	8.4
	34-73	1.6	16.5	0.1	30.1	8.3
	73-105	1.0	15.7	0.1	29.7	8.3
	105-155	0.8	17.7	0.1	25.8	8.4

1	2	3	4	5	6	7
Բաց- շագանակագույն	0-25	2.4	4.4	0.0	29.4	8.1
	25-39	1.4	8.4	0.5	28.8	8.4
	39-85	1.2	15.4	1.0	24.4	8.2

Շագանակագույն հողերի մակերեսային քարքարոտությունը կազմում է 70.3%, որից 18.8%-ը՝ թույլ քարքարոտ, 17.0%՝ միջակ քարքարոտ, 34.5 %-ը՝ ուժեղ քարքարոտ:

Հողաշերտի հզորությունը միջին հաշվով տատանվում է 30-50սմ-ի սահմաններում, ռելիեֆի իջվածքային մասերում հաճախ այն հասնում է 65-70սմ-ի: Ըստ մեխանիկական կազմի այս հողերը դասվում են միջակ և ծանր կավավազային տարատեսակների շարքին: Կախված ռելիեֆի պայմաններից և էրոզայի ենթարկվածության աստիճանից՝ հանդիպում են ինչպես ավելի թեթև, այնպես էլ ծանր մեխանիկական կազմով հողեր:

Հողերի կլանման տարողությունը համեմատաբար ցածր է, որը պայմանավորված է հումուսի սակավ պարունակությամբ և թեթև կավավազային մեխանիկական կազմով:

Շագանակագույն հողերի ծավալային զանգվածը տատանվում է 1.24-1.48գ/սմ³-ի, տեսակարար զանգվածը՝ 2.50-2.65գ/սմ³-ի, ընդհանուր ծակոտկենությունը՝ 4.38-52.1, խոնավությունը՝ 20-30%-ի սահմաններում: Այս տիպի հողերը պարունակում են մեծ քանակությամբ կարբոնատներ՝ մինչև 10-25%, որն առաջ է բերում հողերի ցեմենտացիա և քարացում: Հողը և փխրուկաբեկորային մայրատեսակը հարուստ են հողալկալի մետաղներով, ֆոսֆորական թթվով և կալիումով: Անմշակ հողերում ստրուկտուրանխոշոր կնձկային է:

Տարածքի սևահողերում առանձին ծագումնաբանական հորիզոնների քիմիական բաղադրությունը, մասնավորապես սիլիցիումի, ալյումինիումի, երկաթի, կալիումի պարունակության տեսակետից առանձնապես խիստ չի տարբերվում, նկատվում է դրանց հավասարաչափ կուտակում հողի պրոֆիլի սահմաններում:

Հողային լուծույթի ռեակցիան գլխավորապես չեզոք է (pH-ը տատանվում է 7-ի սահմաններում): Կլանող համալիրը հագեցված է հիմնականում Ca-ով և Mg-ով:

Բնորոշ է կնձկային ստրուկտուրա: Հարուստ են ընդհանուր ազոտով (0.15-0.35%), ֆոսֆորական թթվով (0.15-0.26%) և կալիումով (1-2%):

Դարչնագույն անտառային կարբոնատացված հողերն ունեն սահմանափակ տարածում Արփա գետի հովտում:


Բուն Վայքի հանքավայրի տարածքում հողաբուսական շերտը թույլ է զարգացած, ինչը պայմանավորված է մայրական ինտրուզիվ ապարների՝ գաբրո-սիենիտների ֆիզիկամեխանիկական ցուցանիշներով և ռելիեֆի առանձնահատկություններով: Ապարները կարծր են, ամուր և հողմահարման արդյունքում մակերևութային շերտը վերածվել է 0.15մ առավելագույն հզորությամբ բաց շագանակագույն հողանման զանգվածի, գաբրո-սիենիտների մանրախճի ու տարաչափ բեկորների: Հողային զանգվածի ցեմենտացված է և քարացած, ինչը պայմանավորված է կարբոնատների բարձր պարունակությամբ (17.8%): Հողային զանգվածից վերցրած նմուշում արձանագրվել է 14.25մգ/կգ պղինձ, 62.1մգ/կգ ցինկ, 2.7մգ/կգ արծաթ, 4172մգ/կգ երկաթ, 51.3մգ/կգ քրոմ:

▪ ***Բուսական և կենդանական աշխարհ***

Հանքավայրի շրջանի բուսական աշխարհը ներկայացված է Դարալագյազի ֆլորիստական շրջանի, անդեզիտա-բազալտային և տուֆալավային մայր ապարների վրա բաց և մուգ դարչնային հողերի վրա զարգացած չոր տափաստանային լանդշաֆտային գոտուն բնորոշ բուսականության տեսակներով՝ օշինդրա-վաղանցիկ և լեռնային քսերոֆիտների տեսակների գերակայությամբ (նկար 9): Հայցվող տարածքում նշվել են ցորնուկ, դաշտավլուկ, ասպիրակ, գազ, խնկածաղիկ, ուրց, եզան լեզու, բրոմոպսիս և ոզնաթուփ, ալոճի և մասրենու թփեր: Տարածքը ուսումնասիրվել է երթուղիներով՝ ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակներ հայտնաբերելու նպատակով:

Ըստ ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշման, շրջանում հայտնի են ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված հետևյալ բուսատեսակները.

- կարմրան ութառեջ – վտանգված տեսակ, աճում է ստորին լեռնային գոտում, 700-900մ բարձրությունների վրա, գետերի ափերին, աղուտներում, ճահճացված մարգագետիններում, հանդիպում է Վայքի շրջակայքում, հանքավայրից մոտ 2կմ հեռավորության վրա;



Նկար 3.

- հիբրիկ ատրպատականյան – վտանգված տեսակ, աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, չոր քարքարոտ, կավային, գիպսակիր լանջերին, տրագականտային և ֆրիգանային բուսականության մեջ, հանդիպում է Հերիեր գյուղի մոտ, հանքավայրից մոտ 8կմ հեռավորության վրա,

- ոսպ ոսպնյականման – խոցելի տեսակ, աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ.մ. 750-1800մ բարձրությունների վրա, շիբլակում, նոսրանտառներում,

թփուտներով ծածկված լանջերում, հանդիպում է Հերհեր գյուղի մոտ, հանքավայրից մոտ 8կմ հեռավորության վրա,

- սագասոխուկ դեղին – վտանգված տեսակ, աճում է միջին լեռնային գոտում, ծ.մ. 1200-1500մ բարձրությունների վրա, անտառներում, թփերի մացառուտներում, հանդիպում է Զառիթափ գյուղի մոտ, հանքավայրից մոտ 6կմ հեռավորության վրա:

Հանքավայրի տարածքում որպես ֆոնաին տարածված է չորային լեռնատափաստանի համար բնորոշ ֆաունան: Դիտարկվել է Ժայռային ճնճղուկի և մոխրագույն կաշաղակի թռչչ, բայց տարածքում կատարված երթուղային ուսումնասիրությունների ժամանակ թռչնաբներ չեն արձանագրվել: Հանքավայրը արևմուտքից սահմանափակող ձորակում դիտարկվել է շնագայլ: Տարածքում կան կրծողների, հավանաբար, հասարակական մկան, գետնափոր բներ: Գտնվել է գյուրգային նման օձի չորացած մաշք:

Տարածքը ուսումնասիրվել է երթուղիներով՝ ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներ հայտնաբերելու նպատակով: Ըստ ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշման, շրջանում հայտնի է ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված հարավային պայտաքիթ տեսակը – հազվադեպ, քիչ ուսումնասիրված տեսակ, սահմանափակ արեալով, քարանձավներում բնադրող տեսակ է, հանդիպում է Հերհեր և Զառիթափ գյուղերի մոտակայքում, հանքավայրից մոտ 8 և 6կմ հեռավորությունների վրա:


Բուն հանքավայրի տարածքում չոջիկի այս տեսակը չի դիտարկվել:

▪ ***Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ***

Վայքի գաբրոսիենիտների հանքավայրը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքների սահմաններում:

Հանքավայրից մոտ 8կմ հեռավորության վրա գտնվում է Հերհերի նոսրանտառային պետական արգելավայրը (նկար 10), որը զբաղեցնում է 6139 հա տարածք, Արփա գետի աջափնյա վտակ Հերհեր գետի ավազանում, ծովի մակարդակից 1400-2000 մ բարձրության վրա:

Պահպանության օբյեկտներն են՝ գիհու ռելիկտային նոսրանտառները: Արգելավայրերի համար հիմք է հանդիսացել 14.05.1958թ.-ին ընդունված «ՀՍՍՀ բնության պահպանության մասին» ՀՀ օրենքը:



Նկար 10.

Բնության հատուկ պահպանվող տարածքներ են համարվում բնության հուշարձանները: ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N967-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ տարածքի բնության հուշարձանների ցանկը: ՀՀ Վայոց ձորի մարզում հաշվառված են հետևյալ բնության հուշարձանները (աղյուսակ 15):

Աղյուսակ 15.

Անվանումը	Տեղադիրքը
«Բլրաբերդ» հրաբխային գմբեթ	Վայոց ձորի մարզ, Եղեգնաձոր-Վայք ճանապարհի աջ կողմում
«Սատանայի աշտարակ» սյունաձև բազալտներ	Վայոց ձորի մարզ, Վայք-Ջերմուկ հին ճանապարհին, Արփա գետի կիրճում
«Բախտի կամար» բնական քարե թունել	Վայոց ձորի մարզ, Ջերմուկ քաղաք, Արփա գետի կիրճում
«Անանուն» որմնաքանդակներ	Վայոց ձորի մարզ, Երևան-Գորիս խճուղու ձախ կողմում, Ջերմուկ տանող ճանապարհից 44 մ դեպի Գորիս

1	2
«Անանուն» լավային ծալքեր	Վայոց ձորի մարզ, Ջերմուկ քաղաքից 5 կմ հվ-արլ
«Վարդան Մամիկոնյան» քարե քանդակ	Վայոց ձորի մարզ, Կեչուտի ջրամբարից 2 կմ հվ, Արփա գետի կիրճում, Վայք-Ջերմուկ հին ճանապարհին
«Յիցքար» ժայռագագաթ	Վայոց ձորի մարզ, Վայք քաղաքից 0.5 կմ հս-արմ
«Տորք Անգեղ» քարե քանդակ	Վայոց ձորի մարզ, Ագարակաձոր գյուղից 1.5 կմ հվ-արլ, Անապատ վայրում
«Սֆինքս» քարե քանդակ	Վայոց ձորի մարզ, Ագարակաձոր գյուղ, Գրավ գետի կիրճում
«Սպիտակ քար» ժայռ-մնացուկ	Վայոց ձորի մարզ, Աղավնաձոր գյուղից 3 կմ հս-արմ, Աղավնաձոր-Ելփին ճանապարհի աջ կողմում
«Անանուն» տեկտոնական խախտում	Վայոց ձորի մարզ, Արենի գյուղի արլ մասում, Արփա գետի ձախ ափին
«Պահակային աշտարակ», Էրոզիոն ժայռ-մնացուկ	Վայոց ձորի մարզ, Վայք-Ջերմուկ հին ճանապարհին, Արփա գետի կիրճում, Գնդեվազ գյուղի դիմաց
«Անանուն» դայկա	Վայոց ձորի մարզ, Գնդեվազ գյուղից 1-1.5 կմ հս-արլ, Արփա գետի կիրճում, Վայք-Ջերմուկ հին ճանապարհին
«Անանուն» դայկաներ	Վայոց ձորի մարզ, Գնդեվազ գյուղից 4 կմ հս-արլ, Արփա գետի կիրճում, Վայք-Ջերմուկ հին ճանապարհին
«Անանուն» սյունաձև անջատմամբ բազալտներ	Վայոց ձորի մարզ, Գոմք գյուղի հս-արլ մասում, ձորակի աջ կողմում
«Անանուն» դայկա	Վայոց ձորի մարզ, Ելփին գյուղի հվ եզրին
«Անանուն» խզվածքային կառուցվածք	Վայոց ձորի մարզ, Ելփին գյուղի արմ ծայրամասում
«Անանուն» քարե քանդակներ	Վայոց ձորի մարզ, Խնձորուտ գյուղից 2.0 կմ հս, Զառիթափ-Խնձորուտ ավտոճանապարհի երկու կողմում
«Վայոցսար» (Դալիկ) հրաբուխ	Վայոց ձորի մարզ, Կարմրաշեն գյուղից 3.0 կմ հվ-արմ
«Անանուն» լավային հոսք	Վայոց ձորի մարզ, Շատին գյուղից 0.5 կմ արլ
«Անանուն» դայկայանման մարմին	Վայոց ձորի մարզ, Վերնաշեն գյուղից հս
«Գետիկվանքի» բրածո ֆլորա	Վայոց ձորի մարզ, Գետիկվանք գյուղից 3 կմ հս-արլ, 2240 մ բարձրության վրա
«Ագատեկի» բրածո ֆլորա	Վայոց ձորի մարզ, Ագատեկ գյուղի մոտ
«Ջերմուկի» աղբյուրներ	Վայոց ձորի մարզ, Ջերմուկ առողջարանի տարածքում, ծ.մ-ից 2140 մ բարձրության վրա

1	2
«Յոթաղբյուր» աղբյուր	Վայոց ձորի մարզ, Ջերմուկ քաղաքից 10 կմ հս-արլ դեպի Ալ լիճ տանող ճանապարհին, Ջերմուկի հրաբխային պլատոյի վրա, ծ.մ-ից 2610 մ բարձրության վրա
«Գրավի» աղբյուր	Վայոց ձորի մարզ, Աղավնաձոր գյուղից 5 կմ հվ, Գրավ գետի հովտում, ծ.մ-ից 1630 մ բարձրության վրա
«Պարույր Սևակ» աղբյուր	Վայոց ձորի մարզ, Աղավնաձոր գետի վերին հոսանքում, ծ.մ-ից 1985 մ բարձրության վրա
«Արտաղբյուր» աղբյուր	Վայոց ձորի մարզ, Եղեգիս գյուղից 2.7 կմ հս-արլ, Եղեգիս գետի աջ ափին, ծ.մ-ից 1840 մ բարձրության վրա
«Ջրովանք» աղբյուր	Վայոց ձորի մարզ, Արփի գյուղից 3 կմ հվ-արլ, Արփա գետի ձախ վտակ Ջրովանք գետակի ակունքում, ծ.մ-ից 1345 մ բարձրության վրա
«Առնետի» աղբյուր	Վայոց ձորի մարզ, Խաչիկ գյուղից 3 կմ հս-արլ, ծ.մ-ից 1780 մ բարձրության վրա
«Բազմաղբյուր» աղբյուրներ	Վայոց ձորի մարզ, Հերիեր գյուղի մոտ, ծ.մ-ից 1508 մ բարձրության վրա
«Մոզ» աղբյուր	Վայոց ձորի մարզ, Մալիշկա գյուղից 2.5 կմ արլ, Արփա գետի կիրճի աջ ափին, ծ.մ-ից 1170 մ բարձրության վրա
«Հովվալիճ»	Վայոց ձորի մարզ, Ջերմուկ քաղաքից մոտ 15 կմ հս, Արփա գետի աջ վտակի վերին հոսանքում
«Բարձրունի» լիճ	Վայոց ձորի մարզ, Բարձրունի գյուղից 3 կմ արլ, ծ.մ-ից 2760 մ բարձրության վրա
«Հայելի» լիճ	Վայոց ձորի մարզ, Արտավան գյուղից 2 կմ արլ, ծ.մ-ից 2100 մ բարձրության վրա
«Անանուն» լիճ	Վայոց ձորի մարզ, Կապույտ գյուղից 3 կմ հվ-արլ, ծ.մ-ից 2150 մ բարձրության վրա
«Սրբալիճ» լիճ	Վայոց ձորի մարզ, Մարտիրոս գյուղից 0,5 կմ արլ, ծ.մ-ից 1937 մ բարձրության վրա
«Մարտիրոս» լիճ (Վերին լիճ)	Վայոց ձորի մարզ, Մարտիրոս գյուղից 1,5 կմ արլ, ծ.մ-ից 2145 մ բարձրության վրա
«Ջերմուկ» («Յուք») ջրվեժ	Վայոց ձորի մարզ, Արփա գետի աջակողմյան Ջերմուկ վտակի վրա
«Քարավազ» ջրվեժ	Վայոց ձորի մարզ, Հերիեր գետի աջակողմյան վտակի վրա, Կարմրաշեն գյուղից 2 կմ արլ
«Հերիեր» ջրվեժ	Վայոց ձորի մարզ, Հերիեր գետի վրա, համանուն գյուղից 2.5 կմ հս
«Գետիկվանք» ջրվեժ	Վայոց ձորի մարզ, Եղեգիս գետի աջակողմյան վտակի վրա, Վարդահովիտ գյուղից 0.5 կմ արմ

1	2
«Սմբատասար» բնապատմական համալիր	Վայոց ձորի մարզ, Արտաբույնք գյուղից 0.75 կմ արլ
Պոռշաբերդի բնապատկերներ	Վայոց ձորի մարզ, Գլաձոր գյուղից 6 կմ հս
«Բերդի գլուխ» ամրոցի հրվանդան	Վայոց ձորի մարզ, Գնդեվազ գյուղի հս-արմ եզրին
Վարդանես լճի համալիր	Վայոց ձորի մարզ, Ելփին գյուղից 3.5-4 կմ հս-արլ, նախկին Վարդանես գյուղի ավերակների մոտ
«Սուրբ Գևորգ» աղբյուրների խումբ	Վայոց ձորի մարզ, Հերիեր գյուղի հվ մասում, Հերիեր գետի աջ ափին
Մարտիրոս գյուղի բնապատմական համալիր	Վայոց ձորի մարզ, Մարտիրոս գյուղից 2.0 հվ-արլ, Նգար լեռան արմ լանջին
«Կորնգան եղջուրավոր»	Վայոց ձորի մարզ, Վարդենյաց լեռնանցք, Աղնջաձոր գյուղից 3 կմ հս-արմ

Վայքի գաբրո-սիենիտների հանքավայրին ամենամոտ գտնվող բնության հուշարձանը «Ցիցքար» ժայռագագաթն է, որը գտնվում է Վայք քաղաքից 0.5կմ հյուսիս և հանքավայրից մոտ 3կմ արևմուտք:

3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

- **Ենթակառուցվածքներ**

ՀՀ Վայոց ձորի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության հարավ արևելքում: Այն կազմավորվել է 1995 թվականին նոյեմբերի 7-ին՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունած «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքով, միավորելով Եղեգնաձորի և Վայքի նախկին վարչական շրջանները երեք քաղաքներով: ՀՀ Վայոց ձորի մարզկենտրոնը Եղեգնաձոր քաղաքն է, գտնվում է Երևանից 124 կմ հեռավորության վրա:

Մարզի տարածքը 2308 քմ է (հանրապետության տարածքի 12%), բնակչությունը 48.5 հազար մարդ, քաղաքային բնակչությունը 17.1 հազար մարդ, գյուղականը՝ 31.4 հազար մարդ:

Մարզն ունի 55 բնակավայր, 8 խոշորացված համայնք:

Տարածքով 7-րդն է մարզերի մեջ և զբաղեցնում է ՀՀ տարածքի 7.8 %-ը: Հյուսիսից սահմանակից է Գեղարքունիքի մարզին, հյուսիս-արևելքից՝ ԼՂՀ -ին, հարավ-արևելքից՝ Սյունիքին, հարավից՝ Նախիջևանի Հանրապետությանը (Ադրբեջան), արևմուտքից՝ Արարատի մարզին: Ադրբեջանի հետ սահմանը 87 կմ է: Վայոց ձորի մարզի տարածքի բարձրությունը ծովի մակարդակից տատանվում է 850մ (Արենի) մինչև 3522մ (Վարդենիս լեռ):

Մարզի կենտրոնով ձգվում է Երևան-Արտաշատ-Եղեգնաձոր-Վայք-Մեղրի-Իրան միջպետական նշանակության մայրուղին: Մարզում բեռնափոխադրումներն ու ուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով, օդանավակայան և երկաթուղային տրանսպորտ չկա: Գլխավոր երթուղին 108.3կմ երկարությամբ՝ մարզի մի ծայրից մյուսը ձգվող միջպետական նշանակության ճանապարհն է, որը ծառայում է ինչպես ներմարզային այնպես էլ տրանզիտային փոխադրումների համար դեպի Սյունիքի մարզ, Արցախ և Իրան:

Մարզի տարածքում բջջային հեռախոսակապը և շարժական ինտերնետ կապը ապահովվում է հանրապետություն գործող բոլոր օպերատորների կողմից, այն է՝ “Արմենթել” ՓԲԸ (Beeline ապրանքանիշ), “Ղ-Տելեկոմ” ՓԲԸ (Վիվա սելլ / USU ապրանքանիշ) և “ՅՈՒՔՈՍ” (Ucom ապրանքանիշ): Մարզի բնակավայրերը 97

տոկոսով ապահովված են ինտերնետ ծածկույթով/օպտիկամանրաթելային և եթերային - շարժական/: Ինտերնետի որակը հիմնականում բավարար է:

Մարզում լարային հեռախոսակապ ապահովում է “Արմենթել” ՓԲԸ (Beeline ապրանքանիշ): Լարային հեռախոսակապով ապահովված են մարզի 40 բնակավայրերը, որը կազմում է մարզի բնակչության շուրջ 80%: Ընդհանուր ֆիքսված հեռախոսակապի բաժանորդների թիվը՝ 9250, սակայն սարքավորումների թողունակությունը մոտ երկու անգամ ավելի է:

Մարզի 32 բնակավայրերում գործում է “Հայփոստ” ՓԲԸ մասնաճյուղերը, ապահովելով մարզի բնակավայրերի 58 %-ը, որը ապահովում է մարզի բնակչության 100% հասանելիություն:

ՀՀ Վայոց ձորի մարզում եթերային հեռուստահաղորդումներն իրականացվում են “Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց” ՓԲԸ Վայոց ձորի տարածքային բաժնի կողմից՝ 30 թվային կայանների միջոցով, ապահովելով մարզի բնակավայրերի 98 % ծածկույթը:

Հեռարձակվում է թվային 8 ծրագիր, մարզային՝ տեղական ծրագրեր չկան: Մարզի ամբողջ տարածքը ընդգրկվել է թվային հեռուստահաղորդումների ծածկույթում: Հեռարձակվում է նաև “Հանրային ռադիոն”, որը հասանելի է մարզի բոլոր բնակավայրերում:

Մարզի տարածքով է անցնում Հայաստան-Իրան գազատարը, սակայն, եթե հանրապետությունում գազամատակարարումը ավարտվել է համայնքների 90%-ում, ապա Վայոց ձորում այն կազմում է 38.6%, որը ընդգրկում է այն բնակավայրերը, որտեղ բնակվում են մարզի բնակչության 42.6 %: Մարզի տարածքում գործում են 31 ՓՀԷԿ-եր, կառուցման փուլում են ևս 21: Ներկայումս ՀՀ ՓՀԷԿ-երի հզորությունների 9 %-ը Վայոց ձորի մարզում է: 21 ՓՀԷԿ-երը կառուցման ավարտից հետո Վայոց ձորի մարզի ՓՀԷԿ-երի հզորությունը կավելանա շուրջ 1.4 անգամ:

Մարզում առկա է էլեկտրաէներգիայի բաշխման զարգացած ցանց, որը միացված է նաև ԻԻՀ-ը և Արցախին:

ՀՀ Վայոց Ձորի մարզի բոլոր քաղաքներն ունեն կոյուղու համակարգ, սակայն Վայոց ձորի մարզում կեղտաջրերի մաքրում իրականացվում է միայն Ջերմուկ

քաղաքում, որը սպասարկում է մարզի բնակչության 8.7 %, մնացած բնակավայրերի կոյուղին միացված է հոսող գետերին:

Գործում է 3 աղբավայր, որոնք կառավարվում են համայնքների կողմից, վտանգավոր թափոնների կառավարումն իրականացվում է մասնավոր ընկերության կողմից:

մարզի բոլոր բնակավայրերը ունեն կայուն ջրամատակարարում: 8 բնակավայրերում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի շահագործումն իրականացվում է “Հայջրմուղկոյուղի” ՓԲԸ-ի համապատասխան տեղամասերի կողմից, որոնք սպասարկում են բնակչության 54.8%-ին, իսկ մնացած բնակավայրերում՝ համայնքապետարանների կողմից: Մարզի բնակչության 98.5 % ունի 20 և ավելի ժամ ջրամատակարարում:

Մարզի ջրամատակարարումն իրականացվում է բնական աղբյուրների կապտածներից ինքնահոս եղանակներով:

Զբոսաշրջությունը Վայոց ձորի տնտեսության առավել դինամիկ զարգացող ոլորտներից մեկն է և հայտարարված է տնտեսության գերակա ճյուղ: ՀՀ Վայոց ձորի մարզը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով: Այստեղ է գործել Գլաձորի հռչակավոր համալսարանը /13-րդ դար/ : Վայոց ձորում են գտնվում հայկական մշակույթի հոյակապ հուշարձաններ՝ Նորավանքը, Գնդեվանքը, Շաղիվանքը, Թանահատի, Եղեգիսի, Հերմոնի վանքերը, Սելիմի քարավանատունը, բազմաթիվ խաչքարեր: Մարզն ունի ներքին և արտաքին զբոսաշրջության զարգացման մեծ հեռանկարներ: Այժմ զբոսաշրջության ձևերի մեջ տեղի է ունենում որակական փոփոխություններ: Պասիվ հանգստի ձևերից անցում է կատարվում դեպի ավելի ակտիվ ձևերը: Վայոց ձորի մարզում կարելի է առաջադրել զբոսաշրջության հետևյալ ուղղությունները՝ գյուղական տուրիզմ, էկոտուրիզմ, գիտական տուրիզմ, բնական տուրիզմ, արկածային տուրիզմ, (ժայռամագլցումներ, անձավագիտական տուրեր, լեռնային և հետիոտն երթեր, ձիավորություն լեռնային տարածքներով, կանյոնինգ, ձկնորսություն), պատմամշակութային տուրիզմ:

Մարզում գործում են բազմաթիվ ժամանցի վայրեր, հիսունից ավելի առողջարաններ և հյուրանոցներ, 32 մշտական և 47 սեզոնային սննդի օբյեկտներ, 81 տնային հյուրանոցներ, 6 գինու համտեսի սրահներ:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը կազմել է 27804.3մլն. դրամ:
Արդյունաբերական արտադրանքի ծավալը ըստ արտադրության բաժինների բաշխվել է հետևյալ կերպ.

Աղյուսակ 16.

Ընթացիկ գներով, մլն.դրամով

Ամբողջը	Այդ թվում՝			
	հանքագործ. արդյունաբեր.	մշակող արդյունաբեր.	էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում	ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում
27804.3	404.0	20991.2	6109.5	299.6

Արդյունաբերական արտադրանքի արտադրությունն ըստ տնտեսական գործունեության տեսակների ներկայացված է աղյուսակ 17-ում:

Աղյուսակ 17.

	Թողարկված արտադրանքի ծավալը, ընթացիկ գներով, ¹ մլն.դրամ
Ամբողջ արդյունաբերությունը	27804.3
Այդ թվում՝	
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	404.0
այդ թվում՝	
հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր	404.0
Մշակող արդյունաբերություն	20 991.2
որից	
սննդամթերքի արտադրություն	10 858.3
խմիչքների արտադրություն	9 869.4
պատրաստի մետաղե արտադրա-տեսակների արտադրություն. բացի մեքենաներից և սարքավորանքից	144.5
էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	6109.5
Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	299.5

Բուսաբուծության ոլորտի համախառն արտադրանքը կազմել է 410.9 մլրդ.դրամ, անասնաբուծության ոլորտինը՝ 442.4մլրդ.դրամ:

Հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի ցանքատարածությունները կազմել են 1760հա, միջին բերքատվությունը՝ 13.2ց/հա, համախառն բերքը՝ 3.2հազ.տ:

Կարտոֆիլի ցանքատարածությունները կազմել են 124հա, միջին բերքատվությունը՝ 131.3ց/հա, համախառն բերքը՝ 1.6հազ.տ:

Բանջարանոցային մշակաբույսերի ցանքատարածությունները կազմել են 349հա, միջին բերքատվությունը՝ 127.8ց/հա, համախառն բերքը՝ 4.5հազ.տ:

Բոստանային մշակաբույսերի ցանքատարածությունները կազմել են 14հա, միջին բերքատվությունը՝ 124.0ց/հա, համախառն բերքը՝ 0.2հազ.տոննա:

Պտղի և հատապտղի տարածությունները կազմել են 2510հա, միջին բերքատվությունը՝ 18.3ց/հա, համախառն բերքը՝ 3.8հազ.տ:

Խաղողի տնկարկների տարածությունները կազմել են 1202հա, միջին բերքատվությունը՝ 38.9ց/հա, համախառն բերքը՝ 3.9հազ.տ:

Գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը 01.01.2020թ. դրությամբ՝ կովեր 8.1հազ.գլուխ, խոզեր 3.7հազ.գլուխ, ոչխարներ և այծեր՝ 14.7հազ.գլուխ, ձիեր՝ 300գլուխ:

Արտադրվել է 23.9հազ.տ կաթ, 28.4մլն. հատ ձու և 23տ բուրդ: Կատարվել է 6765.8մլն.դրամի շինարարական և 6371.8մլն.դրամի շինմոնտաժային աշխատանքներ:

Մանրածախ առևտրի շրջանառությունը կազմել է 8033.4մլն.դրամ:

Ուսուցիչ-աշակերտ թվաքանակի հարաբերակցությունը Վայոց ձորի մարզում կազմում է 1:7:

Մարզում գործում է 45 գրադարան, որոնցից 1-ը մարզային կենտրոնական, 4-ը քաղաքային, 41-ը գյուղական:

ՀՀ Վայոց ձորի մարզում գործում է 4 թանգարան, որից 3-ը (Եղեգնաձորի պատկերասրահ, Զերմուկի պատկերասրահ, «Գլաձորի համալսարան» պատմամշակութային արգելոց թանգարան) ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և 1-ը «Եղեգնաձորի երկրագիտական թանգարան» ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ենթակայությամբ:

Մարզում համայնքային ենթակայությամբ գործում է 4 մարզադպրոց:

Գյուղատնտեսական հողատեսքերը ընդգրկում են մարզի ընդհանուր տարածքի մոտ 83,0%-ը:

▪ ***Հողերի տնտեսական յուրացման բնութագիր***

Վայքի գաբրոսիենիտների հանքավայրը գտնվում է Զառիթափի համայնքի Զառիթափ բնակավայրի հողերում:

Զառիթափ բնակավայրը հիմնադրվել է 1829թ.-ին: Գյուղն ունի 501 տնտեսություն և 1634 բնակիչ: Ըստ Զառիթափ բնակավայրի պաշտոնական կայքի՝ գյուղի ընդհանուր հողատարածքը կազմում է 5346 հա, որից մշակովի հողերը՝ 3860 հա, վարելահողերը՝ 485 հա, այգիները՝ 12 հա, արոտավայրերը՝ 3050 հա²:

Գյուղացիները հիմնական զբաղվում են հողագործությամբ, այգեգործությամբ և անասնապահությամբ: Գյուղն ունի միջնակարգ դպրոց, գործող մանկապարտեզ, առողջության առաջնային պահպանության կենտրոն, մանկապատանեկան տուրիստական բազա:

Վայքի գաբրոսիենիտների հանքավայրի հայցվող տարածքը ներկայացված է գյուղատնտեսական պտակային նշանակության հողերով՝ հեռագնա արոտավայրերով և այլ հողատեսքերով:

Հայցվող տեղամասից օգտակար հանածոների արդյունահանման նախագծը և շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատականը ներկայացվել է համայնքի բնակիչներին, քննարկվել է ծրագրավորվող աշխատանքներում բնակիչների ներգրավման հարցը:

▪ ***Պատմության, մշակութային հուշարձաններ***

ՀՀ կառավարության 2003 թվականի հունիսի 26 թիվ 754-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ Վայոց ձորի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկը: Զառիթափ բնակավայրի տարածքում հաշվառված են թվով 22 պատմության և մշակույթի հուշարձանախմբեր՝ ամրոցներ, դամբարանադաշտեր, բնակատեղիներ, գերեզմանոցներ, խաչքարեր, եկեղեցիներ: Դրանց վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակ 18-ում:

² <https://www.zaritap.am/Pages/CustomPage/?CustomPageID=2>

Աղյուսակ 18.

Հուշարձանը	Ժամանակը	Գտնվելու վայրը
ԱՄՐՈՑ	մթա 2-1 հզմ	գյուղի մեջ
բնակատեղի	մթա 2-1 հզմ	
ԱՄՐՈՑ «ՓՇՈՆՔ»	17-18-րդ դդ.	գյուղի արևելյան մասում
գյուղատեղի «Բերդի վիզ»	17-18 դդ.	
ԴԱՍԲԱՐԱՆԱԴԱՇՏ	մթա 2-1 հզմ, 9-20-րդ դդ.	
Գերեզմանոց	9-20-րդ դդ.	գյուղի արևելյան մասում
խաչքար	9-րդ դ.	
խաչքար	9-10-րդ դդ.	
խաչքար	9-10-րդ դդ.	
խաչքար	9-10-րդ դդ.	
խաչքար	9-10-րդ դդ.	
խաչքար	9-10-րդ դդ.	
խաչքար	10-րդ դ.	
խաչքար	10-րդ դ.	
խաչքար	11-րդ դ.	
խաչքար	11-րդ դ.	
խաչքար	10-11-րդ դդ.	
խաչքար	12-րդ դ.	
խաչքար	12-13-րդ դդ.	
խաչքար	14-15-րդ դդ.	
խաչքար՝ Ղաքարի	17-18-րդ դդ.	
ԽԱԶՔԱՐ	1258 թ.	Գյուղի մեջ
ՀՈՒՇԱՐՁԱՆ՝ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻՆ	1974 թ.	

Հեռավորությունը Վայքի գաբրուսիենիտների հանքավայրի և ամենամոտ գտնվող պատմամշակութային հուշարձանի հողերի միջև կազմում է մոտ 7կմ:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Վայքի գաբրուսիենիտների հանքավայրում օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում տեխնաժին ճնշումներ են դրսևորվելու մթնոլորտի, հողային ծածկույթի, բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև լանդշաֆտային ամբողջականության վրա:

Մթնոլորտային օդ.

Բացահանքում աշխատող ավտոտրանսպորտը, գաբրուսիենիտների արդյունահանման աշխատանքները դառնալու է վնասակար գազերի և փոշու արտանետման աղբյուր, փոշեգոյացում տեղի է ունենալու նաև բացահանքի սահմաններում:

Արտանետումների հաշվարկը կներկայացվի աշխատանքային նախագծի և ՇՄԱԳ հաշվետվության մշակման փուլում, երբ կհստակեցվեն սարքավորումների և ավտոտրանսպորտի մակնիշները :

Համաձայն շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերվող նախագծման նորմերի (СНП 11-01-95, СНП 1.02.01-85)՝ սահմանային թույլատրելի խտությունները ածխածնի օքսիդի, ազոտի օքսիդի, մրի և ծծմբային գազի համար համար համապատասխանաբար կազմում են $0,0005\text{գ/մ}^3$; $0,000085\text{գ/մ}^3$; $0,00015\text{գ/մ}^3$; $0,0005\text{գ/մ}^3$:

Ջրային ավազան.

Հայցվող տարածքը արևմուտքից (150մ հեռավորության վրա) և արևելքից (750մ հեռավորության վրա) սահմանափակվում է ձորակներով, որոնք բնութագրվում են սեզոնային հոսքով, մակերևութային հոսք այստեղ ձևավորվում է գարնանը՝ ձնհալի շրջանում և աշնանը՝ անձրևառատ տարիներին:

Արփա գետի հունը գտնվում է տեղամասից մոտ 1.07կմ հեռավորության վրա (ուղիղ գծով), Հերիեր գետի հունը՝ մոտ 970մ հեռավորության վրա : Գետերի հուները նկարագրվող շրջանում հայցվող տարածքից գտնվում են մոտ 250մ հիպսոմետրիկ ավելի ցածր նիշերում:

Գրունտային ջրերի հորիզոններ, աղբյուրներ հանքավայրի տարածքում չեն արձանագրվել : Մթնոլորտային տեղումներից առաջացած ջուրը ինքնահոս կերպով հեռացվում է հանքավայրի տարածքից հաստվածքում առկա բնական ճեղքերի համակարգով :

Բնապահպանական կառավարման պլանով (հայտի 5-րդ գլուխ) նախատեսված են մի շարք միջոցառումներ, որոնց նպատակն է բացառել բացասական ազդեցությունները ջրային ռեսուրսների վրա :

Հողային ծածկույթ.

Հողային ռեսուրսների վրա կարող են դրսևորվել հետևյալ ազդեցությունները.

- հողերի խախտում ենթակա են բացահանքի, արտադրական հրապարակի, ժամանակավոր լցակայանի և ճանապարհների տարածքում,
- հողի վերին, բերրի համարվող շերտի խախտում,
- արտադրական հրապարակի տարածքի աղտոտում :

Բնապահպանական կառավարման պլանով (հայտի 5-րդ գլուխ) նախատեսված են մի շարք միջոցառումներ, որոնց նպատակն է նվազեցնել և չեզոքացնել բացասական ազդեցությունները հողային ռեսուրսների վրա :

Բուսական և կենդանական աշխարհ.

Գաբրոսիենիտների արդյունահանման աշխատանքների արդյունքում հայցվող տարածքում խախտվելու է բնական բուսածածկը, որը ներկայացված է չորային լեռնատափաստանին բնորոշ տեսակներով: Հայցվող տարածքում ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ չեն արձանագրվել:

Տեղամասում չեն դիտարկվել խոշոր կաթնասունների բներ, որջեր, թռչնաբներ, կան կրծողների գետնափոր բներ: Օգտակար հանածոյի արդյունահանումը կհանգեցնի բնական լանդշաֆտի, կենսամիջավայրի փոփոխությանը, իսկ աշխատանքների հետ կապված աղմուկն ու թրթռումները, մարդկանց մշտական տեղակայումը հանքավայրի տարածքում անհանգստացնող գործոն են դառնալու կենդանական աշխարհի ներկայացուցիչների համար: ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներ չեն արձանագրվել:

Բնության հատուկ պահպանվող տարածքներ. Հանքավայրի տարածքը չի հանդիսանում բնության հատուկ պահպանվող տարածք, ինչպես նաև չի

սահմանակցում նման տարածքների հետ: Հերիերի նոսրանտառային պետական արգելավայրը գտնվում է հանքավայրից մոտ 8կմ հեռավորության վրա, հետևաբար այստեղ պահպանվող գիհու ռելիկտային նոսրանտառների վրա ազդեցություն չի դրսևորվելու:

Հայցվող տարածքի և ամենամոտ գտնվող «Ցիցքար լեռնագագաթ» բնության հուշարձանի միջև առկա է 3կմ հեռավորություն, ինչը նույնպես բացառում է հուշարձանի վրա ազդեցությունների դրսևորումները:

Աղտոտում ընդերքօգտագործման թափոններով.

Հանքավայրի փուշտա շերտի առաջացումները և բլոկների արդյունահանումից առաջացած արտադրական ջարդոնը ՀՀ կառավարությանն առընթեր ՕՀՊՀ-ի 1995 թվականի դեկտեմբերի 22-ի լիազումար նիստի թիվ 10 արձանագրությամբ հաստատվել են որպես հումք շինարարական խճի և ավազի արտադրության համար (ըստ ՀՍՏ ԳՈՍՏ 8267-95 և 8236-95): Դրանք չեն հանդիսանում ընդերքօգտագործման թափոն:

Ընդերքօգտագործման թափոն չի համարվում նաև հանքավայրի մակերեսին առկա 0.15մ առավելագույն հզորությամբ բաց-շագանակագույն հողանման զանգվածը, որը ըստ ՀՀ հողային օրենսգրքի՝ ենթակա է պահպանության, հետագա ռեկուլտիվացման աշխատանքներում օգտագործվելու նպատակով:

Գաբրոսիենիտների արդյունահանման տեխնոլոգիական գործընթացի հետ զուգակցված են մի շարք այլ թափոնների առաջացում, այդ թվում.

- Բանեցված կապարե կուտակիչներ և խոտան: Ծածկագիրը՝ 921 10100 13 01 2: Կազմը՝ կապարե թիթեղներ 70-75%, պլաստմասե իրան՝ 10-13%, էլեկտրոլիտ – 15-20%: Թունավոր է, էկոթունավոր, հրդեհապայթյունավտանգ չէ: Տեղամասի տարածքում այս տեսակի թափոնի պահում չի նախատեսվում, քանի որ ընկերության ավտոպարկի և տեխնիկական միջոցների ընթացիկ սպասարկումը կատարվելու է հարակից բնակավայրերի մասնագիտացված կազմակերպություններում:

- Իրենց սպառողական հատկությունները կորցրած դիզելային յուղերի մնացորդներ: Ծածկագիրը՝ 54100203 02 03 3: կազմը՝ յուղ 95%, մեխանիկական խառնուկներ 1.8%, ջուր 3.2%: Թունավոր է, էկոթունավոր, դյուրավառ, կոռոզիոն ակտիվության տեսակետից ոչ ակտիվ, ռեակցիոնունակ չէ: Տեղամասի տարածքում այս թափոնի

պահում չի նախատեսվում, քանի որ ընկերության ավտոպարկի և տեխնիկական միջոցների ընթացիկ սպասարկումը կատարվելու է հարակից բնակավայրերի մասնագիտացված կազմակերպություններում:

- Բանեցված շարժիչների յուղեր: Ծածկագիրը՝ 54100201 02 03 3: Կազմը՝ յուղ 94.6%, մեխանիկական խառնուկներ 2.1%, ջուր 3.2%: Թունավոր է, էկոթունավոր, դյուրավառ, կոռոզիոն ակտիվության տեսակետից ոչ ակտիվ, ռեակցիոնունակ չէ: Տեղամասի տարածքում այս թափոնի պահում չի նախատեսվում, քանի որ ընկերության ավտոպարկի և տեխնիկական միջոցների ընթացիկ սպասարկումը կատարվելու է հարակից բնակավայրերի մասնագիտացված կազմակերպություններում:

- Բանեցված դողածածկեր: Ծածկագիրը՝ 57500200 13 00 4, տարեկան ծավալը՝ 4 հատ: Կազմը՝ բութադիենային կաուչուկ 97-99%, պողպատ՝ 1-3%: Էկոթունավոր է, պայթյունավտանգ չէ, բայց կրակի առկայությամբ կարող է այրվել: Կոռոզիոն ակտիվության տեսակետից ակտիվ չէ, ռեակցիոնունակ չէ: Բանեցված դողածածկերը կարճաժամկետ կուտակվելու են արտադրական հրապարակի տարածքում, այնուհետև տեղափոխվելու են սահմանամերձ գոտի՝ սահմանագծի կառուցման ինժեներական աշխատանքների ժամանակ օգտագործվելու նպատակով:

- Չտեսակավորված կենցաղային աղբ տարեկան 25տ ծավալով: Ծածկագիրը՝ 91200400 01 00 4: Կազմը՝ ապակի, փայտ, թուղթ, կտոր, սննդի մնացորդներ, պոլիմերներ: Հրդեհապայթյունավտանգ չէ, կոռոզիոն ակտիվության տեսակետից պասիվ է, ռեակցիոնունակ չէ: Աղբը հավաքվելու է 60լ տարողությամբ ամուր պոլիէթիլենային հատուկ տոպրակների մեջ, այնուհետև փոխադրվելու է մոտակա աղբավայր, աղբահանության նպատակով կնքվելու է հտեղական ինքնակառավարման ամապատասխան պայմանագիր, վճարումը կատարվելու է ըստ պայմանագրի և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան:

Պատմամշակութային միջավայր. Զառիթափ համայնքի Զառիթափ բնակավայրում հաշվառված պատմամշակութային հուշարձանների և հայցվող տարածքի միջև առկա է մոտ 7կմ հեռավորություն: Հետևաբար, որևիցե ազդեցություն

պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների վրա գաբրուսիենիտների արդյունահանման ժամանակ չի դրսևորվելու:

Աղմուկ, թրթռումներ

Աշխատանքների ժամանակ առաջանալու են տեխնոլոգիական աղմուկ և թրթռումներ: Համաձայն գործող նորմատիվ փաստաթղթերի, արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերով տարածքներում աղմուկի (ձայնի) առավելագույն մակարդակը չպետք է գերազանցի 95դԲԱ, իսկ արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերում ձայնի մակարդակը չպետք է գերազանցի 80դԲԱ:

Աղմուկի ազդեցությունը ազդակիր Զառիթափ բնակավայրում գնահատելու նպատակով կատարվել են հետևյալ հաշվարկները:

Տեղամասի տարածքում աղմուկի առաջացման աղբյուրներն են՝ բացահանքի տարածքում կատարվող արդյունահանման աշխատանքները, երեսապատման բլոների բարձման և տեղափոխման աշխատանքները, լցակույտի ձևավորումը, ճանապարհներին տրնասպորտի տեղաշարժը:

Հանքավայրում գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը՝ LAէկվ ընդունված է79դԲԱ:

Աղմուկի մակարդակը աղմուկից պաշտպանող տարածքի հաշվարկային կետում որոշվում է՝

LAտար = Laէկվ - ΔLAհեռ - ΔLaէկր - ΔLAկանաչ բանաձևով, որտեղ՝

LAէկվ - աղմուկի աղբյուրի ձայնային բնութագիրը, LAէկվ=79դԲԱ,

ΔLAհեռ - աղմուկի մակարդակի նվազումը հաշվարկային կետի և աղմուկի աղբյուրի միջև հեռավորությունից կախված, ΔLAհեռ կազմում է 15դԲԱ,

ΔLAէկր - աղմուկի մակարդակի նվազումը էկրանով (բացահանքի տարածք), ΔLAէկր =15դԲԱ,

ΔLAկանաչ- աղմուկի մակարդակի նվազումը կանաչ գոտիով, ΔLAկանաչ=10դԲԱ:

Աղմուկի մակարդակը Զառիթափ գյուղի մոտ կկազմի՝

Laտար = Laէկվ - ΔLAհեռ - ΔLaէկր - ΔLaկանաչ = 79 - 15 - 15 - 10 = 39դԲԱ (նորման 45դԲԱ):

Գիշերային ժամերին արդյունահանման աշխատանքներ տեղամասի սահմաններում չեն կատարվելու:

Հանքահանման տեխնոլոգիական գործընթացների հետ կապված առաջանալու է առաջին կարգի տրանսպորտային թրթռում (վիբրացիա), որը կապված է

տեղաշարժվող ինքնագնաց և կցորդային մեքենաների, տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Թոթրումների սահմանային թույլատրելի մակարդակը Z առանցքով չպետք է գերազանցի 115դԲԱ, իսկ X-Y առանցքներով՝ 112դԲԱ:

Ստորև բերվում է շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցության նախնական գնահատական մատրիցը.

Աղյուսակ 19.

Շրջակա միջավայրի բաղադրիչներ	Գործողություններ		
	Մերձատար ճանապարհների անցում	Բացահանքի անցում	Արդյունահանման աշխատանքներ, լցակայանառաջացում
Մթնոլորտային օդ	ցածր երկարատև	ցածր երկարատև	ցածր երկարատև
Ջրեր	-	-	-
Հողեր	ցածր երկարատև	ցածր երկարատև	ցածր երկարատև
Կենսաբազմազանություն	աննշան	աննշան	աննշան
Բնության հատուկ պահպանվող տարածքներ	-	-	-
Պատմամշակութային հուշարձաններ	-	-	-
Աղմուկ, թրթռումներ	ցածր երկարատև	ցածր երկարատև	ցածր երկարատև
Աղտոտում թափոններով	աննշան	աննշան	աննշան
Պատմամշակութային միջավայր-	-	-	-

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

միջոցառումները.

✓ Կենցաղային աղբի հավաքում հատուկ անթափանց պոլիէթիլենային տոպրակների մեջ, տեղափոխվում մոտակա կազմակերպված աղբավայր համաատասխան ծառայություն մատուցող կազմակերպության ուժերով՝ կնքված պայմանագրի հիման վրա:

✓ Նավթամթերքների անհրաժեշտ ծավալի պահեստավորման համար օգտագործել բետոնապատ հարթակներ :

✓ Արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում :

✓ Փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների (աշխատանքային հրապարակ, հանքախորշ, լցակույտ, մուտքային և դեպի լցակույտեր տանող ավտոճանապարհ և այլն) ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին :

✓ Կեղտաջրերի հավաքում հորատիպ բետոնապատ պատերով զուգարանում, որը պարբերաբար դատարկվում է հատուկ ծառայության ուժերով : Համապատասխան ծառայություն մատուցող կազմակերպության հետ պայմանագիրը կկնքվի ընդերքօգտագործման իրավունքը ստանալուց հետո : Աշխատանքների ավարտից հետո դատարկված փոսը կլցվի քարերով, կծածկվի հողի շերտով:

✓ Բացահանքի, արտադրական հրապարակի, ժամանակավոր լցակույտի, ճանապարհների տարածքների լեռնատեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիա: Ռեկուլտիվացիոն աշխատանքների ծավալը, բնույթը և անհրաժեշտ ֆինանսական միջոցների գնահատականը կներկայացվի աշխատանքային նախագծի և ՇՄԱԳ հաշվետվության փուլում, երբ կիրականացվի արդյունահանման ենթակառուցվածքների առարկայական նախագծում:

✓ Մակաբացման աշխատանքների ժամանակ 0.15մ առավելագույն հզորությամբ բաց-շագանակագույն հողանման զանգվածի (առանձին հատվածներում հնարավոր է հողի և մանրախճի զանգվածի) տարանջատված հեռացում և կուտակում ժամանակավոր լցակայանում: Հողանման զանգվածի մակերեսին տաձաստանային գոտուն բնորոշ տարախոտա-հացազգային բույսերի ցանք:

✓ Արտադրական հրապարակի կանաչապատում արագ աճող, չորային կլիմայական գոտուն բնորոշ թփերով, գաճաճ ծառատեսակներով: Այս նպատակով ընկերությունը շահագործական ծախսերում կնախատեսի շուրջ 475.0հազ. դրամ :

✓ Շինարարական խճի և ավազի հումք հանդիսացող փուշտա շերտի առաջացումների և երեսապատման բլոկների արդյունահանումից առաջացած արտադրական մնացորդների/ջարդոնի կառավարում՝ պահեստավորում առանձին լցակայանում, վերամշակման և/կամ իրացման ընթացակարգերի մշակում և ներկայացում աշխատանքային նախագծի և ՇՄԱԳ հաշվետվության փուլում:

✓ Թափոնների կառավարում, ինչի նպատակով տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարման աշխատանքները նախատեսվում է իրականացնել հարակից Վայք քաղաքի տարածքում գործող մասնագիտացված ընկերություններում: Հանքավայրի տարածքում բացառել բանեցված կապարե կուտակիչների, դիզելային և շարժիչների յուղերի մնացորդների կուտակում/պահեստավորում: Մաշված դողածածկերը պահեստավորել արտադրական հրապարակում հատկացված վայրում, որտեղից պարբերաբար նախատեսվում է տեղափոխել սահմանամերձ տարածքներ՝ ինժեներական աշխատանքների ժամանակ օգտագործելու նպատակով:

✓ Ըստ կիրառելիության ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի N 781-Ն որոշման դրույթների ապահովում: Պահպանության ենթակա բուսատեսակների պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում նախատեսվում է.

1) առանձնացնել պահպանվող գոտիներ, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են կարմիր գրքում գրանցված բուսատեսակների՝ սույն կետում նշված նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով,

2) ժամանակավորապես սահմանափակել առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, եթե դրանք կարող են բերել նշված

բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացմանն ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը,

3) տեղափոխել պահպանվող բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայրեր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրում են համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը՝ գենետիկական բանկում պահելու և հետագայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով:

✓ Շրջանի կենսաբազմազանության պահպանության նպատակով հայցվող տեղամասի շահագործման աշխատանքներին մասնակցող անձնակազմը անցնելու է հատուկ վերապատրաստում և ծանոթանալու է շրջանում հայտնի՝ ՀՀ կենդանիների և բույսերի կարմիր գրքերում գրանցված տեսակների վերաբերյալ:

✓ Տեղամասի տարածքի պարագծով տեղադրվելու են նախագգուշացնող նշաններ, ինչը թույլ կտա կանխել անվտանգության տեխնիկայի հրահանգավորում չանցած մարդկանց մուտքը հայցվող տարածք:

✓ Հազվագյուտ երկրաբանական մերկացումներ և հանքաբանական գոյացումներ, երկնաքարեր, հնէաբանական, հնագիտական, գիտական և գիտամշակութային հատուկ արժեք ներկայացնող այլ օբյեկտներ հայտնաբերելու դեպքում դադարեցնել աշխատանքները և այդ մասին հայտնել լիազոր մարմնին՝ հետագա աշխատանքների ընթացքը պարզաբանելու նպատակով: Աշխատանքների ընթացքում կիրառել պատահական գտածոների ընթացակարգը՝ հետևյալ միջոցառումների իրականացման միջոցով.

- համապատասխան անձնակազմի և պայմանագրով աշխատողների ուսուցում պատահական հնագիտական գտածոների ճանաչման, դրանց հետ վարվելակերպի և արձագանքի ուղղությամբ;
- գտածոների ուսումնասիրություն հրավիրված հնագետների կողմից, որպեսզի վերջիններս ուղղորդեն հնագիտական գտածոների ճանաչման և արձագանքման գործընթացը,

- արձանագրությունների կազմում պատահական գտածոներին արձագանքելու համար, ներառյալ աշխատանքի ժամանակավոր դադարեցումը գտածոների հայտնաբերման վայրում;
 - պետական մարմինների ծանուցում,
 - պատահական գտածոների գնահատման և պեղումների արագացված ընթացակարգերի կիրառում, ազդեցությունների սահմանափակման համար, միաժամանակ նվազեցնելով շահագործական աշխատանքների ուշացումները:
- ✓ Համաձայն ՄՆ 245-71 սանիտարական նորմերի՝ առանց պայթեցման աշխատանքների ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման ձեռնարկությունների համար սահմանված է 50մ սանիտարապաշտպանիչ գոտի : Հայցվող տեղամասը գտնվում է Վայք քաղաքից 3.5կմ հյուսիս-արևելք, Զառիթափ գյուղից մոտ 7կմ հյուսիս և Արին գյուղից մոտ 3.5կմ հարավ-արևելք, ինչը 70-140 անգամ գերազանցում է սանիտարապաշտպանիչ գոտու չափսերը:
- ✓ Արդյունահանման աշխատանքների ավարտից հետո արտադրական հրապարակից բեռնարկղային տիպի տնակների և այլ արտադրական կառույցների ապամոնտաժում:
- ✓ Հանքի փակումից հետո մշտադիտարկումների իրականացում, որի դիտակետեր նախատեսվում է տեղադրել՝
- օգտակար հանածոյի արդյունահանված տարածքում՝ բացահանքի կողերի դեֆորմացիաները (սողանքներ, փլուզումներ) գնահատելու նպատակով:
 - օգտակար հանածոյի արդյունահանված տարածքում՝ վերակուլտիվացիոն աշխատանքների արդյունքների գնահատման համար:
 - բացահանքի հարակից տարածքում՝ ռելիեֆի հնարավոր դեֆորմացիաները գնահատելու նպատակով:
- Մշտադիտարկումների պարբերականությունը՝ տարին 1 անգամ: Մշտադիտարկման ձևը՝ տեղագնություն: Մշտադիտարկումները իրականացվում են 5 տարի տևողությամբ՝ մինչ երկրադինամիկ, հիդրոդինամիկ և շրջակա միջավայրի հնարավոր աղտոտվածությունը բնութագրող ցուցանիշների կայունացումը:

6. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍԱՆԻՏԱՐԻԱ

Բացահանքում կատարվող բոլոր լեռնային աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել պահպանելով «Հանքավայրերը բաց եղանակով մշակելու անվտանգության միասնական կանոնների» և «Հանքավայրերի տեխնիկական շահագործման կանոնների» պահանջները: Մասնավորապես, անհրաժեշտ է՝

- ✓ աշխատանքի ընդունվող բոլոր բանվորների հետ անցկացնել անվտանգության տեխնիկայի նախնական ուսուցում իր մասնագիտության գծով և, գիտելիքների ստուգման համար, ընդունել քննություն:
- ✓ կատարել բացահանքի ճարտարագիտա-տեխնիկական անձնակազմի գիտելիքների ստուգում:
- ✓ եռամսյակը մեկ անգամ անցկացնել անվտանգության տեխնիկայի գծով հրահանգավորում,
- ✓ հերթափոխի պետի կողմից, աշխատանքներն սկսելուց առաջ, կատարել աշխատանքային տեղի զննում և տալ գրավոր առաջադրանք՝ կատարողի ստորագրությամբ,
- ✓ բանվորներին ապահովել սարքին գործիքներով և պաշտպանական միջոցներով,
- ✓ ավտոտրանսպորտային միջոցները թույլ տալ աշխատելու միայն այն դեպքում, երբ դրանք սարքին են և կանոնավոր գործում են դրանց վրա տեղադրված գազախառնուրդների չեզոքացման սարքերը,
- ✓ փոշենստեցման նպատակով, դրանց առաջացման բոլոր օջախները՝ մուտքային ավտոճանապարհները, աշխատանքային հրապարակները, հանքաքարը, հանքախորշերը կանոնավոր կերպով ջրել ջրցան մեքենայով:
- ✓ Արդյունաբերական սանիտարիայի միջոցառումներից նախատեսվում են՝
- ✓ մեքենաներն ու մեխանիզմները պարբերաբար ներկել աչքի համար հանգիստ գույներով,
- ✓ հերմետիկացնել մեխանիզմների և տրանսպորտային միջոցների խցիկները,
- ✓ անբարենպաստ եղանակներին աշխատողներին պատասպարել արդյունաբերական հրապարակում տեղադրված ինվենտարային տնակներում,

- ✓ ինվենտարային տնակը պետք է ունենա պահարա/կախիչներ աշխատողների հագուստը կախելու համար,
- ✓ աշխատողներին միշտ ապահովել թարմ խմելու ջրով,
- ✓ բնական օդափոխմամբ ջրցողարանում նախատեսվել է 2 ցնցուղ, որն ապահովվում է հոսող ջրով, կախիչով, հեղուկ օճառով, էլեկտրական սրբիչով կամ միանվագ օգտագործման թղթյա անձեռոցիկներով:
- ✓ բացահանքի արդյունաբերական հրապարակում նախատեսվում է զուգարան, որում նախատեսվել է 1 ծորակ ունեցող մեկ լվացարանով երկու սանիտարատեխնիկական սարքավորում, որը սահմանված կարգով պետք է դատարկվի:

7. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

«Ֆանտոմ Գրուպ» ՍՊԸ-ի արտակարգ իրավիճակները կարող են պայմանավորված լինեն հետևյալ գործոններով.

- i. երկրաշարժ՝ հաշվի առնելով, որ հանրապետության տարածքը գտնվում է սեյսմիկ ակտիվ գոտում,
- ii. հրդեհներ՝ կապված մարդածին գործոնների հետ:

Նախատեսվում է մշակել երկրաշարժերի դեպքում գործողությունների պլան՝ վտանգավոր տարածքներից աշխատակիցների ապահով տարահանումն իրականացնելու նպատակով: Անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ հրահանգավորում իրականացնելու ժամանակ առանձին ներկայացվելու են նաև երկրաշարժերի ժամանակ աշխատակիցների պահվածքի կանոնները, գործողությունների հաջորդականությունը: Արտադրական հրապարակումն կենցաղային նշանակության վազոն-տնակներում նախատեսվում են առաջին օգնության դեղորայքային փաթեթներ:

Հրդեհային անվտանգությունն ապահովվելու համար աշխատակիցները տեղեկացվելու են տեխնոլոգիական պրոցեսներում օգտագործվող նյութերի հրդեհավտանգության վերաբերյալ: Նշանակվելու է հրդեհային անվտանգության համար պատասխանատու անձ, մշակվելու է հրդեհի դեպքում անձնակազմի գործողությունների պլան: Արտադրական տարածքի հատուկ հատկացված վայրերում տեղադրվելու են հրդեհաշիջման սկզբնական միջոցներ՝ կրակմարիչներ, ավազով արկղ, բախ:

Բացահանքի տարածքում աշխատանքների անվտանգ իրականացման նպատակով.

- ✓ աշխատանքի են թույլատրվում անձիք, որոնք ունեն հատուկ պատրաստվածություն և որակավորում,
- ✓ օգտագործել մեքենաներ և մեխանիզմներ, սարքավորումներ և նյութեր, որոնք համապատասխանում են անվտանգության պահանջներին և սանիտարական նորմերին,
- ✓ անցկացնել պլանային-զգուշացնող համալիր վերանորոգումներ, պրոֆիլակտիկ աշխատանքներ և այլ դիտարկումներ,

- ✓ աշխատանքի ժամանակ պետք է պահպանվեն անվտանգության տեխնիկայի կանոնները:

Նախատեսվում է կատարել պլանային աշխատանքներ ուղղված արտադրական տրավմատիզմի նվազեցմանը, ժամանակին, ոչ ուշ քան երեք ամիսը մեկ, աշխատակիցների հետ անցկացնել հրահանգավորում անվտանգության տեխնիկայի գծով:

«Ֆանտոմ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից հայցվող տեղամասի տարածքում կնախատեսվի համապատասխան հաղորդակցման համակարգ (ինֆորմացիոն և շարժակալ կապ), որով հնարավոր է արտակարգ իրավիճակների ժամանակ կապ հաստատել ձեռնարկության վարչական կազմի, տեղական ինքնակառավարման մարմինների, շտապ օգնության և փրկարար ծառայության հետ:

Հանքավայրի շահագործման աշխատանքային նախագիծը ենթակա է տեխնիկական անվտանգության փորձաքննության, որի արդյունքում տրամադրվում է փորձաքննական եզրակացություն, անվտանգության վկայագիր: Արտակարգ իրավիճակների հետ կապված խնդիրներն ամրագրվում են վերոնշյալ փաստաթղթերում:

8. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՂՏՈՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

Վայքի գաբրուսիենիտների հանքավայրի շահագործման ընթացքում «Ֆանտոմ Գրուպ» ՍՊ ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. նավթամթերքներով արտադրական հրապարակի տարածքի աղտոտվածության մշտադիտարկումներ, տարին մեկ անգամ հաճախականությամբ,

2. կուտակված շագանակագույն հողերի մշտադիտարկում՝ հումուսի որոշման նպատակով,

2. մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ : Որպես սահմանային թույլատրելի խտությունները ընդունվելու են. ածխածնի օքսիդի համար՝ 5մլգ/մ³, ազոտի երկօքսիդի համար՝ 0.085մլգ/մ³, մրի համար՝ 0,15մլգ/մ³;

3. հանքի տարածքում կենսաբազմազանության դիտարկում, տարին մեկ անգամ հաճախականությամբ ;

4. աղմուկի մակարդակի մոնիթրինգ աշխատանքային գործընթացի ժամանակ ;

5. լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ, տարին մեկ անգամ հաճախականությամբ:

Մշտադիտարկման տեսակների և պարբերականության վերաբերյալ տվյալները ներկայացված են նաև աղյուսակ 20-ում:

Աղյուսակ 20.

Մշտադիտարկումների օբյեկտը	Վայրը	Ցուցանիշը	Տեսակը	Նվազ. հաճախական.
1	2	3	4	5
Մթնոլորտային օդ	Հայցվող տարածք	Հանքավոշի, ածխածնի օքսիդ, ազոտի օքսիդներ, մուր	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, չափումներ ավտոմատ չափման սարքերով	շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ

1	2	3	4	5
Հողային ծածկույթ	Արտադրական տարածք	Աղտոտում նավթամթերքներով	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտու- թյուն, չափումներ ավտոմատ չափման սարքերով	Տարեկան մեկ անգամ
	Հողային շերտի թուփ	Հումուսի պարունակություն	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտու- թյուն	Տարեկան մեկ անգամ
Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ	Ընդերքօգտագործման տարածքին հարակից շրջան	Տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն	Հաշվառում, նկարագրություն, քարտեզագրում	Տարեկան մեկ անգամ
Աղմուկ	Արդյունահանման նպատակով հայցվող տարածք	Աղմուկի մակարդակ	Չափումներ ավտոմատ սարքերով	Տարեկան մեկ անգամ


Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման և աղտոտվածության ուսումնասիրության նպատակով վերցված նմուշների լաբորատոր հետազոտությունը նախատեսվում է իրականացնել հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում: Կենսաբազմազանության մշտադիտարկումը կկատարվի համապատասխան որակավորում ունեցող մասնագետների կողմից՝ պայմանագրային հիմունքներով :

Մոնիթորինգի իրականացման նպատակով ընկերության շահագործական ծախսերում կնախատեսվի մոտ 500.0հազ.դրամ գումար :

Շրջակա միջավայրի վրա ազդեցության աղտոտման կանխարգելման մոնիթորինգի կետերի տեղադիրքը ներկայացված է ստորև նկար 11-ում:

Մշտադիտարկման կետերի տեղադիրքերը կարող են փոփոխվել աշխատանքային նախագծի մշակման և արտադրական ենթակառուցվածքների տեղադիրքերի ճշգրտման ժամանակ :

Մոնիթորինգի կետերի սխեմատիկ քարտեզ



- Մթ/նմ-1 Մթնոլորտային օդի աղտոտվածության մշտադիտարկման կետ
 - Հոդ/նմ-2-1 Արտադրական հրապարակի աղտոտվածության մշտադիտարկման կետ
 - Հոդ/նմ-2-2 Կուտակված շագանակագույն հողերի մշտադիտարկման կետ
 - Աղմ/նմ-3 Արտադրական հրապարակի աղտոտվածության մշտադիտարկման կետ
- Կենսաբազմազանության դիտարկման տարածք

Նկար 11.

Գրականություն

1. «ՀՀ ՇՄՆ «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ -ի տվյալներ
2. Почвы Армянской ССР. Ред./ Р.А. Эдилян, Г.П. Петросян, Н.Н. Розов. Ереван: “Айастан”, 1976 г.
3. Հայաստանի բույսերի Կարմիր Գիրք.– 2010թ.
4. Հայաստանի կենդանիների Կարմիր Գիրք.– 2010թ.
5. Флора Армении / под ред. А.Л.Тахтаджяна. – Ереван: изд-во АН Арм ССР
6. “Растительность Армянской ССР”. Магакьян А.К.
7. “Флора, растительность и растительные ресурсы Армении”, Институт ботаники НАН РА Армянское ботаническое общество. Ереван
8. “Дикорастущие съедобные растения Армении”. А.П. Тер-Восканян, Ученые записки Ереванского государственного института.
9. “Цветущие уголки биоразнообразия”, FAO,
<http://www.fao.org/3/i1687r/i1687r08.pdf>
10. “Флора и растительность степей Армении”, Файвуш Г.М., диссертация на соискание ученой степени доктора биологических наук, отдел геоботаники и экологии растений Института ботаники АН Республики Армения
11. «Животный мир Армянской ССР». Даль С.К ,1954
12. ՀՀ Կոտայքի մարզպետարանի պաշտոնական կայք
13. «Заповедники СССР. Заповедники на Кавказе». Издательство "Мысль" 1990
14. Թամանյան Կ., Գաբրիելյան Է., Ֆայվուշ Գ., Հովհաննիսյան Մ., Ներսեսյան Ա., Արևշատյան Ա., Խանջյան Ն., Վարդանյան Ժ., “Հայաստանի էնդեմիկ բույսերի կարմիր ցուցակ”
15. Վայոց ձորի մարզը թվերով